

ԱԹԵՆՔԻ ՄԷՋ ԶՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱԲ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝ ԴԱՐԱԲԱԴԻ ԶԱՐՑՈՎ

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբը համախառնազանգ երկիրներու ներկայացուցիչները՝ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգեյ Լավրով, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Պեոնար Բուշենը եւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղարի տեղակալ ձեռնարկ Սթեյնպորկ, Դեկտեմբեր 1-ին Աթենքի մէջ ընթացող ԵԱՀԿ-ի արտաքին գործոց նախարարներու խորհուրդի նիստի շրջագիծէն ներս, Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներու հետ կայացած հանդիպման աւարտին տարածեցին միատեղ յայտարարութիւն Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման վերաբերեալ:

Նշելով բանակցութիւններու դրական ընթացքը՝ ինչի մասին

վկայ են այս տարուայ ընթացքին Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու 6 հանդիպումները, պատուիրակութիւններու ղեկավարները համաձայնած են, որ այդ հանդիպումներու «աճող յաճախականութիւնը շօշափելիօրէն նպաստած է կողմերու միջեւ երկխօսութեան աշխուժացման եւ յառաջիակայացին՝ 2007 թուականի Նոյեմբեր 29-ին Մատրիտի մէջ առաջարկուած Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման հիմնարար սկզբունքները աւարտական տեսքի բերելու ուղղութեամբ»:

ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի համախառնազանգ երկիրներու ներկայացուցիչները կողմերուն կողմէն

Շաբ.բ էջ 4

ԶՅԿ-Ի ԶԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԶԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ընդհանուր տեսարան մը ՀՀԿ համագումարի դահլիճէն

Երեւանի Մարզահամերգային համալիրին ներս Շաբաթ, Նոյեմբեր 28-ին կայացաւ իշխող՝ Հայաստանի Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) 12-րդ համագումարը: Համագումարի պատուիրակները միաձայնութեամբ կուսակցութեան նախագահ վերընտրեցին Սերժ Սարգսեանին:

Համագումարին հրաւիրուած էին իշխող կողմիցիայի մաս կազմող «Օրինաց Երկիր», «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնները, ինչպէս նաեւ կողմիցիոն նախկին գործընկեր Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Ընդդիմադիր՝ խորհրդարանական «Ժառանգութիւն» կուսակցութիւնը հրաւիրուած չէր: Հրաւիր-

ուած չէին նաեւ Հայ Ազգային Գոնկրէսին մաս կազմող կուսակցութիւնները:

Սերժ Սարգսեան համագումարի ժամանակ իր ունեցած ելոյթի ընթացքին անդրադարձաւ երկրի ներքին կեանքին, Հայ-թրքական յարաբերութիւններուն, դարաբաղեան խնդրին եւ այլ կարեւոր հարցերու:

2008 թուականի նախագահական ընտրութիւններուն յաջորդած իրադարձութիւնները Սարգսեան որակեց «անընդունելի եւ խիստ վտանգաւոր զարգացումներ»: Ան ըսաւ որ, կարեւորագոյն ընելիքը հասարակութիւնը միա-

Շաբ.բ էջ 4

«ԶԱՅԱՍՏԱՆ» ԶԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆԻՆ ԶԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԲ ՄՕՏ 16 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐ



Հինգշաբթի, Նոյեմբեր 26-ին Ամերիկայի Գոհաբանութեան Օրուայ առթիւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տարեկան թելեթոնի ընթացքին հանգանակուեցաւ մօտ 16 միլիոն տոլար:

«Մեր Շուշին» կարգախօսը ունեցող հանգանակութեան գումարները պիտի յատկացուին Շուշի քաղաքի վերականգնման ծրագրին:

Լոս Անճելըսէն հեռարձակուող թելեթոնը տեւեց 12 ժամ ու սիրուե-

ցաւ հայաստանեան հեռատեսիլի ալիքներով՝ հասանելի դառնալով աշխարհի բազմաթիւ երկիրներուն մէջ գոնուող հայութեան:

«Մենք մեծ ուրախութեամբ նշում ենք, որ արձանագրուել է 15 միլիոն 875 հազար 43 տոլարի նուիրատուութիւնների խոստում եւ կատարուած նուիրատուութիւններ», - «Ազատութիւն» ռատիոկայանին

Շաբ.բ էջ 4

ԶԱՆԳԱՆԱԿՈՒԹ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԸՍՏ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ	
Հայաստան եւ Արցախ	-\$1,747,043
Ռուսաստան	-\$ 5,290,000
Եւրոպա	-\$ 4,126,000
(Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա, Գոլանտա, Աւստրիա)	
Մեծն Բրիտանիա	-\$1,200,000
Միացեալ Նահանգներու արեւելեան շրջան	-\$ 450,000
Միացեալ Նահանգներու արեւմտեան շրջան	-\$1,636,000
Գանատա (թորոնթօ)	-\$ 310,000
Գանատա (Մոնթրէալ)	-\$ 250,000
Արժանթին	-\$ 350,000
Պրագիլ	-\$ 200,000
Լիբանան	-\$ 216,000
Աւստրալիա	-\$ 100,000
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	-\$15,875,043

ԶԱՆ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՓՈԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԻՆ

Երեքշաբթի, Դեկտեմբեր 1-ին Հայ Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ) ներկայացուցիչները հանդիպում ունեցան Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեանի հետ, քննարկելու համար Ամերիկահայութիւնը յուզող բազմաթիւ հարցեր: Հանդիպումի ընթացքին ՀԱԽ-ի ներկայացուցիչները պաշտօնապէս տեղեկացուցին Պր. Գրիգորեանին, որ կազմակերպութիւնը որոշած է զօրակցել իրեն՝ Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի 2-րդ ընտրաշրջանին ներս յառաջիկայ Երեքշաբթի, Դեկտեմբեր 8-ին տեղի ունենալիք ընտրութիւններուն:

«Փոլ Գրիգորեանին զօրակցելու որոշումը կայացուեցաւ ուսումնասիրելէ ետք թեկնածուներու յանձնառութեան մակարդակը եւ բերած նպաստը՝ Ամերիկահայ համայնքին», - այս կապակցութեամբ յայտարարեց ՀԱԽ-ի ատենապետ Վազգէն Խոտանեան. «Մենք կը հաւատանք որ, Պր. Գրիգորեան պիտի կատարէ համայնքին կատարած իր խոստումները»:

Փոլ Գրիգորեան ծնած ու մեծցած է Լոս Անճելըսի Ռէսիտա



շրջանին մէջ: Ան երրորդ սերունդի ամերիկահայ է, որ մեծ օգտակարութիւն ունեցած է Սան Ֆրանսիսկո Հովիտի շրջանին:

2003 թուականին Գրիգորեան ընտրուած է Պլըպէնք քաղաքի Ուսումնական Խորհուրդի անդամ, իսկ 2006-ին՝ նահանգային խորհրդարանի անդամ ընտրուած է 43-րդ ընտրաշրջանին, որ կ'ընդգրկէ Կլէնտէլ, Պլըպէնք եւ Սիլվըր Լէյք քաղաքները:

ՕՐՈՒՄՆ ԶԱՐՑԵՐՈՒՆ ԴԵՏ

ՀՀԿ-Ն ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Անցեալ Շաբաթ օր, Երեւանի մէջ կայացաւ իշխող՝ Հանրապետական կուսակցութեան 12-րդ համագումարը ուր հաւաքուած էին Հայաստանի այսօրուայ դիմագրաւած քաղաքական, տնտեսական, ընկերային, ազգային եւ այլ տաղանակներու գլխաւոր դերակատարները:

ՀՀԿ-ի ղեկավար եւ երկրի փաստացի նախագահ Սերժ Սարգսեան համագումարի պատգամաւորներու եւ հրաւիրեալներու առջեւ իր ունեցած համապարփակ ելոյթին ընթացքին անդրադառնալէ ետք այս օրերու կարեւորագոյն հարցերուն, ի միջ այլոց յայտարարեց ըսելով՝ «ինչպիսին կը լինի ՀՀԿ-ն, այդպիսին էլ կը լինի Հայաստանի ապագան»:

Ապագայի մասին խօսելէ առաջ կ'արժէ հպանցիկ ակնարկ մը նետել ու տեսնել թէ, ինչ կը ներկայացնէ ՀՀԿ-ն ու իր ղեկավարած երկիրը ներկայիս:

Այսօրուայ Հանրապետական կուսակցութիւնը ոչ մէկ առնչուած չի ունի 1990 թուականին, վաղամեծիկ Աշոտ Նաւասարդեանի կողմէ հիմնադրուած կուսակցութեան ո՛չ սկզբունքներուն, ոչ ալ հետագայում նպատակներուն հետ: Ազգայնականութեան ու ցեղակրօնութեան գաղափարախօսութեան վրայ հիմնուած այդ կուսակցութեան ներկայի անդամները գաղափարազուրկ մարդկանց խումբ մըն են: Պետական բարձրաստիճան պաշտօնեաներ մոտք կը գործեն կուսակցութենէն ներս, իրենց աթոռները պահելու որպէս միջոց ու ապաստան: Տակաւին վերջերս, վարչապետ Տիգրան Սարգսեան, խումբ մը նախարարներու հետ միասին, անդամագրուեցան ՀՀԿ-ին, պիտո՞ւն էին քննարկման առթիւ խորհրդարանէն ներս քննադատութեանց ենթարկուելէ անմիջապէս ետք: Պետական հիմնարկներու մէջ աշխատողները կը միանան կուսակցութեան, իրենց ընտանիքի ապրուստը ապահովելու մտահոգութիւններէն մղուած: Մեծահարուստ գործարարները, որոնք տիրապետող են ՀՀԿ-ն ներս, եկած են կուսակցութիւն, պետական միջոցներու հաշտոյն նոր հարստութիւն դիզելու, իրենց ունեցածը պահելու եւ կամ հարկային պարտաւորութիւններէ խուսափելու նպատակներով:

Հայաստանի օլիգարխներու մեծամասնութիւն, որոնք մենաշնորհներ հաստատելով իրենց ձեռքերուն մէջ առած են երկրի ամբողջ տնտեսութիւնը, այս կամ այն ձեւով կապուած են Հանրապետական կուսակցութեան հետ: Իսկ ամենէն տխուրը, Հայ Եկեղեցու հոգեւոր ծառայութեան կոչուած բարձրաստիճան հոգեւորականներ կը դառնան այդ կուսակցութեան վերնախաւին շուրջ, շատ պարագաներուն ներգրաւուելով անոնց ապօրէն գործունէութեան ծիրէն ներս:

ՀՀԿ-ի իշխանութեան տակ, այսօրուայ Հայաստանի քաղաքական իրականութիւնը այնքան ալ տարբեր չէ խորհրդային ժամանակաշրջանի միակուսակցական դրութենէն: Հանրապետա-

կան կուսակցութիւնը ոչ միայն կ'օգտագործէ պետական ամբողջ մեքենան ու միջոցները, ծառայեցնելով զանոնք իշխանութիւնը պահելու ու ամրապնդելու իր նպատակներուն, այլ նաեւ, կը սահմանափակէ միւս բոլոր կուսակցութիւններու, ներառեալ իր հետ գործակցող ու իշխանամէտ նկատուող կուսակցութիւններու գործունէութիւնը:

Բնականաբար, շատ աւելի ծանր է վիճակը ընդդիմադիր կուսակցութիւններուն համար, որոնց գործունէութեան առջեւ կը դրուին անյաղթահարելի այնպիսի խոչընդոտներ, որոնք ծիծաղելի կը դարձնեն ժողովրդավարութեան ու բազմակուսակցականութեան տարրական սկզբունքները, որոնց համաձայն պէտք է ապահովուած ըլլան ազատ գործունէութեան համահաւասար պայմաններ բոլոր կուսակցութիւններուն համար:

Սակայն, ՀՀԿ-ի իշխանութեան տակ ընդդիմադիր կուսակցութիւնները կ'ենթարկուին այլեւայլ ճնշումներու, կը ձերբակալուին ու քաղաքական բանտարկեալի կարգավիճակին կ'արժանանան անոնց ղեկավարներն ու գործիչները, իսկ շարքային անդամները կը յայտնուին իրենց գործն ու ասպարէզը կորսնցնելու վտանգին առջեւ: Այդ կուսակցութիւններուն համար փակ են զանգուածային լրատուական միջոցները, զրկուելով ժողովուրդի հետ հարողակցելու իրաւունքէն: Նոյն այդ կուսակցութիւնները մեծ դժուարութիւններու առջեւ դրուած են նիւթական միջոցներ ապահովելու առումով:

ՀՀԿ-ն չի կրնար հանդուրժել այլակարծութիւն, փակ կը պահէ միակ ազատ հեռատեսիլի ալիքը՝ «Ա1+»-ը ու խիստ հակողութիւն հաստատած է մնացեալ հեռատեսիլի ալիքներու լրատուական եւ քաղաքական հաղորդումներուն վրայ: Աւելին՝ նոր օրէնքներ մշակելով կը ձգտի առաւել եւս սահմանափակելու մամուլի ազատութիւնները:

Կուսակցութիւնները ունին միայն մէկ նպատակ, ժողովուրդի վստահութեան արժանանալով, զալ իշխանութեան ու ծառայել այդ ժողովուրդին: Իսկ, ընտրութիւնները կորսնցնելու պարագային իշխանութենէն հեռանալ ու սպասել յաջորդ ընտրութիւններուն:

Հանրապետական կուսակցութիւնը իշխանութեան վրայ կը շարունակէ մնալ միայն ու միայն ընտրութիւններ կեղծելով, սահմանադրական կարգը խախտելով, ապօրինութիւնները հովանաւորելով, ու իր ապագան նոյնացնելով երկրի ապագային հետ:

Դատելով ՀՀԿ-ն իր ներկայով, դժուար պիտի չըլլայ կանխատեսել որ ինչպիսին պիտի ըլլայ իր ղեկավարած երկիրը ապագային:

Ճիշդ է, Հայաստանի ապագան կապուած է ՀՀԿ-ի հետ: Այդ կուսակցութեան հեռացումով ու օրինաւոր իշխանութեան հաստատումով է պայմանաւորուած, Հայաստանն ու Հայ ժողովուրդը իր ներկայ տաղանակներէն դուրս բերելու կարեւորագոյն նպատակի իրականացումը:

ԵՐԲ ԱՅՈՒՆ ՈՉ Է, ԻՍԿ ՈՉ-Ը՝ ԱՅՈ

ՅԱԿՈՒԲԱԴԱՆԵԱՆ

«Մեր այո-ն այո է, իսկ ոչ-ը՝ ոչ», Նոյեմբերի 28-ին ՀՀԿ 12-րդ համագումարի ժամանակ իր կուսակցիցներին դիմեց ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսեանը, թերեւս ելնելով այն մտավախութիւնից, որ նրանց համար իշխանութեան այո-ն ու ոչ-ը վերջին ամիսներին խառնուել են իրար: Սերժ Սարգսեանի ելոյթը կարծես թէ փաստացի միտուած էր Հանրապետականների այդ ներքին կասկածներն ու անորոշութիւնները ցրելուն, նրանց հանգստացնելուն, համոզելուն, որ ՀՀԿ-ն ոչ միայն չի գիշերել իր դիրքը քաղաքական ասպարէզում, այլ նոյնիսկ «քաղաքական առաջնորդութիւնից» անցնելու է «հասարակական-քաղաքական առաջնորդութեան»:

Թուով էր, թէ Սերժ Սարգսեանը ՀՀԿ 12-րդ համագումարի ամբիոնը կ'օգտագործի հասարակութեանը, քաղաքացիներին դիմելու համար, հանդէս կը գայ ելոյթով, որը ոչ թէ ՀՀԿ անդամներին, այլ Հայաստանի քաղաքացիներին է ուղղուած, շօշափում է նրանց յուզող խնդիրները: Մինչդեռ, քաղաքացիներին յուզող խնդիրների առումով Սերժ Սարգսեանի ելոյթի անդրադարձերը հպանցիկ էին: Օրինակ, տնտեսական ճգնաժամի առումով Սերժ Սարգսեանն ընդամէնն ասաց, որ դրա ազդեցութիւնը քաղաքացիներն իրենց վրայ աւելի քիչ զգացին, քան կարելի էր ենթադրել՝ ելնելով մակրոտնտեսական ցուցանիշներից: Դէ իհարկէ, միշտ էլ կարելի է ինչ որ բանից ելնելով շատ ենթադրել, իսկ յետոյ արձանագրել, թէ վատ ենթադրութեան ինչքան քիչ մասն է դարձել իրականութիւն: Ոչ մի խօսք կառավարութեան տնտեսական քաղաքականութեան, դրա հանդէպ նախագահի վերաբերմունքի, անհրաժեշտ շտկումների, բարեփոխումների ընթացքի, Հայաստանում օլիգոպոլիայի խնդրի, մրցակցային միջավայրի ձեւաւորման մասին:

Աւելին, Սերժ Սարգսեանը ոչ միայն ոչ մի բառ չասաց այդ խնդիրների, բիզնես-իշխանութիւն սերտաձման հետեւանքների եւ այդ սերտաձման դէմ պայքարի, կոռուպցիայի դէմ պայքարի մասին, այլ նոյնիսկ «փառք ու պատիւ» տուեց օլիգարխներին, որոնք, նրա խօսքով, օգնել են կառավարութեանը, որ տնտեսական ճգնաժամը քիչ ազդի հասարակութեան վրայ: Այստեղ նա նկատելի է, որ Սերժ Սարգսեանը ՀՀԿ առաջ փաստացի աջակցութիւն է յայտնում օլիգարխներին եւ հակադրուած է անընդհատ նրանց դէմ պայքարի անհրաժեշտութեան մասին խօսող վարչապետ Տիգրան Սարգսեանին, ում մի քանի օր է, ինչ դարձրել է այդ օլիգարխների ապաստարան դարձած ՀՀԿ անդամ: Ու թերեւս հենց այդ պատճառով էլ Սերժ Սարգսեանը ցուցադրաբար հակադրուած է Տիգրան Սարգսեանին, օլիգարխներին հաւատացնելու կամ հանգստացնելու համար, որ Տիգրան Սարգսեանը ՀՀԿ չի մտնում որպէս դեսանտ, այլ մտնում է որպէս զինուոր:

Իսկ հասարակութեանը հանգստացնող, կամ հասարակութեան համար համոզիչ գրեթէ ոչինչ Սերժ Սարգսեանը չասաց, բացառութեամբ թերեւս այն բանի, որ 2010 թուականի բիւջէն կը լինի աւելի

մեծ, քան 2009 թուականինը: Մինչդեռ դա հասարակութեան համար փաստացի աւելի անհանգստացնող, քան հանգստացնող լուր է: Բանն այն է, որ հասարակութիւնը շատ լաւ գիտէ, որ մեծ բիւջէն նշանակում է շատ հարկեր, իսկ հարկերը քամուած են նոյն հասարակութեան ջանից, քանի որ օլիգարխներին կրկին բաժին է ընկնում ոչ թէ հարկեր վճարելու, այլ ընդամէնը աշխատատեղերը պահելու առաքելութիւնը, որի դիմաց նրանք ստանում են հարկ չվճարելու «լեզիտիմացուած» արտօնութիւն: Ընդ որում, բիւջէն ոչ միայն հարկերի հաշուին է մեծանալու, այլ նաեւ պարտքերի, այսինքն վարկերի, որ Հայաստանը վերցնում է միջազգային կազմակերպութիւններից: Իսկ այդ պարտքերը յետոյ էլի հասարակութիւնն է վճարելու:

Այնպէս որ, նոյնիսկ այդ մասով, Սերժ Սարգսեանը եթէ նոյնիսկ ուզում էր լաւ լինի, փաստացի ստացուած է ինչպէս միշտ: Եւ ինչպէս միշտ, ոչ մի հակառակ ու առարկայական խօսք երկրում օրինականութեան եւ իրաւականութեան մակարդակի մասին, արտօնեալների խաւի չէզոքացման մասին, էլիտայի վարքի մասին, ուժն ու հարստութիւնը չցուցադրելու մասին: Այդ պայմաններում, «քաղաքական առաջնորդից» «հասարակական քաղաքական առաջնորդի» դերակատարում ստանձնելու ՀՀԿ-ին ուղղուած կոչը հասարակութեան համար հնչում է նոյնիսկ իբրեւ սպառնալիք:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱԶՆԱՅԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅՈՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Քեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՑԱՌՈՒՄ ՀՀԿ-ՅԱԿ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ինչպես իշխող կուլիցիան ներկայացնող կուսակցությունների, այնպես էլ ընդդիմադիր Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) ներկայացուցիչները չեն բացառում համագործակցությունը Հայաստանի հանրապետական կուսակցության եւ ՀԱԿ-ի միջև:

Իշխող «Բարգաւաճ Հայաստան» կուսակցության խորհրդարանական խմբակցության անդամ Նաիրա Զոհրաբեանը համոզուած է, Հանրապետական կուսակցության 12-րդ համագումարում նախագահ Սերժ Սարգսեանին իր ելույթով արձագանքել է առաջին նախագահ, Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի վերջին ելույթին, որի առնչութեամբ, ինչպես յաջորդ օրը՝ նոյեմբերի 12-ին, ասել էր Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Վահագն Խաչատրեանը՝ Կոնգրեսը պատրաստ է «յանուն մեծ գաղափարի» համագործակցութեան ձեռք մեկնել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին:

«Այդ իմպուլսները այս վերջին ելույթում չէ, որ ի յայտ եկան», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում երկուշաբթի օրը ասաց Զոհրաբեանը: - «Եթէ յիշում եք՝ նախագահական ընտրութիւններից յետոյ Հանրապետութեան հրապարակում տեղի ունեցած մեծ հանրահաւաքում նախագահն ինքը կոչ արեց բոլորին միասնական խնդիրներ շուրջ նստել երկխօսութեան, եւ այդ առաջարկը քաղաքական բոլոր ուժերին՝ այդ թւում նաեւ արմատական ընդդիմութեանը, միշտ եղել է ուժի մէջ»:

Նաիրա Զոհրաբեանը, նշելով, թէ «քաղաքականութիւնը դինամիկ երեւոյթ է», ու հետեւաբար ինքը չի կարող բացառել Հանրապետական - Հայ ազգային կոնգրես համագործ-

ակցութիւնը, շարունակեց. - «Որեւէ քաղաքական ուժի հետ համագործակցութիւն, եթէ այն միտուած է մեր երկրի բարգաւաճմանը, դէպի դրական իմպուլս իր մէջ պարունակող որեւէ դրական համագործակցութիւն որեւէ ուժի հետ՝ կոնստրուկտիւ համագործակցութիւն, եւ չեմ կարող բացառել»:

ՀՀԿ-ի խորհրդարանական խմբակցության անդամ Կարէն Աւագեանը թէեւ չի կարծում, որ նախագահն իր ելույթով նպատակ է ունեցել պատասխանել Լեւոն Տէր-Պետրոսեանին, սակայն ինքը նոյնպէս առաջիկայում չի բացառում նման համագործակցութիւնը:

«Հանրապետական կուսակցութիւնը շատ յստակ իրականացնում է իր քաղաքականութիւնը եւ այդ քաղաքականութիւնը իրականացնելիս ով կը փորձի միանալ այդ ծրագրի իրականացմանը, որը կը հեշտացնի այդ ճանապարհը, եւ գտնուում եմ, որ որեւէ խնդիր չկայ», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց Աւագեանը:

Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Վլադիմիր Կարապետեանը այս առնչութեամբ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց. - «Քաղաքականութեան արագ արձակման պարագայում հնարաւոր է նստել սեղանի շուրջ եւ քննարկել համագործակցութեան տարբերակները: Մինչ այդ, ցանկացած խօսակցութիւնները իրատեսական չեմ համարում»:

Ինչ վերաբերում է հարցին, թէ իրականում արձագանքե՞լ է նախագահ Սարգսեանը առաջին նախագահ Տէր-Պետրոսեանի ելույթին, Կարապետեանն ասաց, որ թողնում է առանց մեկնաբանութեան՝ ընդգծելով, որ պէտք է «գործողութիւններով արձագանքել եւ ոչ թէ խօսքերով»:

ՕՏԱՐԵՐԿՐԵԱՅ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՈՒՄ ԿՐՃԱՏՈՒԵԼ ԵՆ ՄՕՏ 40 ՏՈԿՈՍՈՎ

Այս տարուայ առաջին վեց ամիսներին անցած տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ օտարերկրեայ ներդրումները Հայաստանի տնտեսութեան իրական հատուածում կրճատուել են մօտ 40 տոկոսով՝ կազմելով շուրջ 312 միլիոն դոլար: Ազգային վիճակագրական ծառայութիւնից «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեցին, որ այս թիւը իր մէջ չի ներառում բանկային համակարգում կատարուած ներդրումները:

Ամենամեծ անկումը վերաբերում է ռուսական ներդրումներին՝ դրանք նուազել են աւելի քան երեք անգամ՝ կազմելով մօտ 100 միլիոն դոլար:

HSBC Բանկ Հայաստան դրամատան գործադիր տնօրէն Թիմ Սլեյթերը, մեկնաբանելով օտարերկրեայ ներդրումների անկման ցուցանիշները, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մատնանշեց համաշխարհային տնտեսական պատճառները, սակայն աւելացրեց. - «Դեռ կան որոշակի խնդիրներ Հայաստանում, որոնք, թերեւս, պէտք է լուծուեն, եւ որոնք Հայաստանի [ներդրումային] իմիջը դարձնում են ոչ այնքան լաւ, որ քան պէտք է լինէր: Ես կ'ասեի, որ բարելաւումները մաքսային ու հարկային ոլորտներում այն թիւ մէկ հարցն են, որի լուծումը տեղական կամ օտար բիզ-

նեսները կը ցանկանան տեսնել: Երկրորդ խնդիրը՝ տրանսպորտային ծախսերի նուազեցումն է: Կարծում եմ թուրքիայի հետ սահմանի բացումը կ'ունենայ շատ դրական ազդեցութիւն»:

Էկոնոմիկայի նախարարութեան Տնտեսական քաղաքականութեան եւ ռազմավարութեան մշակման վարչութեան պետ Արտակ Բաղդասարեանի գնահատականով, մինչեւ 5 տարի ժամանակահատուածում Հայաստանը կը կարողանայ վերականգնել օտարերկրեայ ներդրումների մինչ-ճգնաժամային ակտիվութիւնը:

Հինգշաբթի «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում Բաղդասարեանը, մասնաւորապէս, ասաց. - «Մենք թիրախաւորում ենք, որ միջնաժամկետում պէտք է կարողանանք լիարժէք ձեւաւորել այն ենթակառուցուածքը, որը արդէն կը գրաւի շատ օտարերկրեայ ներդրողների եւ նրանց համար այստեղ շահաւէտ բիզնես անելու հնարաւորութիւն կը ստաց»:

EV Consulting բիզնես-խորհրդատուական ընկերութեան ներկայացուցիչ Սեւակ Յովհաննիսեանի կարծիքով, յատկապէս կարեւոր է Հայաստանում ներդրումների համար նոր ոլորտների ստեղծման անհրաժեշտութիւնը:

ՔՆՆՈՒԹԻՒՆ՝ ՑՄԱՀ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾՆԵՐԻ ԽՑՈՒՄ ԱՐՈՒԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ



Արտեմ Խաչատրեանը ցմահ ազատազրկուածներ Դերեքի Բեքաւեանի, Էդիկ Գրիգորեանի եւ Արսէն Արծրունու հետ

«Ազատամտութիւն» թերթի գլխաւոր խմբագիր Արտեմ Խաչատրեանի լուսանկարը՝ «Հոկտեմբերի 27»-ի գործով ցմահ ազատազրկուածներ Դերեքի Բեքաւեանի ու Էդիկ Գրիգորեանի, ինչպէս նաեւ «Դրոյց» գործով ցմահ ազատազրկուած Արսէն Արծրունու հետ, Նուբարաշէն քրէակատարողական հիմնարկում ծառայողական քննութեան առիթ է դարձել:

«Մամուլում հրապարակուած լուսանկարի եւ Նուբարաշէն քրէակատարողական հիմնարկում դատապարտեալների պահման ռեժիմի խախտմանը վերաբերող տեղեկատուութեան հիման վրայ Հայաստանի արդարադատութեան նախարար Գէորգ Դանիէլեանի յանձնարարութեամբ նշանակուել է ծառայողական քննութիւն», - այս մասին հաղորդում է արդարադատութեան նախարարութեան՝ Հինգշաբթի տարածած հաղորդագրութիւնը:

Յիշեալ լուսանկարը հրապարակուել էր նոյեմբերի 26-ի «Հայկական ժամանակ» օրաթերթի առաջին էջում:

1999 թուականի հոկտեմբերի 27-ին Նաիրի Յունանեանի գինուած ոճրախումբը, ներխուժելով խորհրդարանի նիստերի դահլիճ, իրականացրեց աննախադէպ հասարակութիւն՝ գնդակահարելով 8 պետական գործիչներին:

«Սովորական նկար է: Գնացել եմ օրինաւոր այցելութեան եւ լուսանկարուել եմ դատապարտեալների հետ», - «Ազատութիւն» ռադի-

ոկայանի հետ զրոյցում, լուսանկարի իսկութիւնը հաստատելով, ասաց «Ազատամտութիւն» օրաթերթի գլխաւոր խմբագիր Արտեմ Խաչատրեանը:

Արտեմ Խաչատրեանը փոխանցեց, որ հոկտեմբերի 5-ին իր թերթի աշխատակցի ուղեկցութեամբ այց է կատարել «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկի ցմահ դատապարտեալների 94-րդ խուց, որտեղ պատիժը նոյն խցում կրում են երեք դատապարտեալները:

Այն դիտարկմանը, թէ սա փաստօրէն խմբակային տեսակցութիւն է դատապարտեալների խցում, ինչը Հայաստանի օրէնսդրութիւնը չի նախատեսում, Խաչատրեանն արձագանքեց. - «Երեք մի կամերայում են: Որ ամէն մեկին առանձին չկանչեն ինչ-որ մի տեղ տեսնելու՝ ժամանակի էկոնոմիայի համար, մենք խնդրեցինք, որ մեզ թոյլ տան մենք բոլորս այցելենք նրանց բոլորին միաժամանակ նրանց խցում: Այսքան բան»:

Արտեմ Խաչատրեանը, ում խմբագրած «Ազատամտութիւն» թերթը յաճախ է հանդէս գալիս հակասական գնահատականներով եւ առաւելապէս յայտնի է Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ընդդիմութեան հասցէին արուող սուր քննադատութեամբ, ոչ միայն արտառոց բան չի տեսնում հրապարակուած նկարում: Աւելին՝ ընդգծում է, որ երեք դատապարտեալների հետ էլ շատ ջերմ յարաբերութիւնների մէջ է:

ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԱԾՈՒՄ ՄՕՏ 30 ՏՈԿՈՍ ԱՆԿՈՒՄ Կ'ԱՐՁԱՆԱԳՐՈՒԻ

Տարեկերջին տնտեսութեան իրական հատուածում Հայաստանը մօտ 30 տոկոս անկում կ'արձանագրի: Այսօր կայացած ասուլիսում այս մասին յայտնեց «Հայրենական ապրանք արտադրողների միութեան» նախագահ Վազգէն Սաֆարեանը: «Նախորդ տարի մեր ՀՆԱ-ն եղել է 12 մլրդ դոլար, այս տարի այն լինելու է մօտ 7.5 մլրդ, այսինքն՝ մօտ երեսուն տոկոս անկում ենք արձանագրելու տնտեսութեան իրական հատուածում», - ասաց նա՝ աւելացնելով, որ տեղեակ է վարչապետի 15 տոկոս տնտեսական անկումի մասին յայտարարութեանը:

Ըստ նրա՝ անցած 7 տարիների ընթացքում արդիւնաբերութեան

նկատմամբ պետական մարմինների անտարբերութեան պատճառով Հայաստանը կորցրել է մօտ 15 մլրդ դոլար: «Դրսում աշխատող մեր հայրենակիցները անցած տարիների ընթացքում տրանսֆերտների տեսքով ամենաքիչը 30 մլրդ դոլար են ուղարկել հայրենիք, բայց դրանից մօտ 15 մլրդ-ը հանրապետութիւնից դուրս էր գալիս, որովհետեւ մենք բազմաթիւ ապրանքներ ներկրում ենք», - ասաց նա՝ աւելացնելով, որ Հայաստանում հնարաւորութիւն կա բուսական իւղ, շաքար, կարագ արտադրելու, բայց պետութեան կողմից հայրենական արտադրութեան նկատմամբ անուշադրութեան պատճառով Հայաստանում հնարաւորութիւն չկայ դրանք զարգացնելու:

ԼՈՒՐԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԸ ԴԻՄԵԼ Է ԵԱՅԿ-ԻՆ

Լեռնային Ղարաբաղի արտաքին գործերի նախարարութիւնը ԵԱՀԿ քարտուղարութիւն է ուղարկել ԼՂՀ Ազգային ժողովի՝ Նոյեմբերի 25-ին ընդունած յայտարարութեան տեքստը՝ ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարների Դեկտեմբերի 1-ից 2-ը Աթէնքում նախատեսուած նիստի մասնակիցների շրջանում տարածելու համար:

Համապատասխան նամակ է ուղարկուել նաեւ ԵԱՀԿ գործող նախագահ Զորջ Պապանդրեուին, իսկ պատճէնը՝ ԵԱՀԿ գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ ղեկավար Անշէյ Կասպրշիկին:

Յիշեցնենք, որ ԼՂՀ ԱԺ-ն նամակում նախագովչացրել էր Ադրբեյջանի ռազմատենչ յայտարարութիւնների վտանգաւորու-

թեան մասին, եւ նշել, թէ «Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում նկատուող վերջին զարգացումները վկայում են Ադրբեյջանի ոչ կառուցողական դիրքորոշման բացայայտ դրսեւորումները մասին: Քարոզչական տարբեր հարթների կիրառմամբ Ադրբեյջանի իշխանութիւնները պատրանք են ստեղծում միջազգային միջնորդութեամբ շարունակուող քննարկումներից իրենց դժգոհութեան մասին, այնինչ, իրական քաղաքականութեան մէջ այդ երկիրը անթաքոյց կերպով ժամանակ է ձգում՝ հետագայում Արցախի դէմ նոր պատերազմ սանձազերծելու միջոցով տարածաշրջանի ռազմաքաղաքական հաւասարակշռութիւնը յօգուտ իրեն փոխելու նպատակով»:

«ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԱՆՅԱՐԿԻ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ Է ԳՆԱԼՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՅԱՐՑՈՒՄ»

Սերժ Սարգսեանի յարձակումները Լեռն Տէր-Պետրոսեանի նկատմամբ վկայում են, որ առաջիկայում նա պատրաստուած է անհարկի գիջումների գնալ Ղարաբաղի հարցում», - NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում նշեց Հայ ազգային կոնգրեսի արտաքին յարաբերութիւնների յանձնախմբի ղեկավար Վլադիմիր Կարապետեանը՝ պատասխանելով ՀՀԿ համագումարում Սերժ Սարգսեանի՝ առաջին նախագահ Լեռն Տէր-Պետրոսեանի հասցէին արած մեղադրանքներին: Յիշեցնենք, որ Սերժ Սարգսեանն իր ելոյթում նշել էր, թէ իրեն մեղադրում են այն մարդիկ, ովքեր ցանկանում էին Ղարաբաղը Ատրպէյճանի կազմում տեսնել», իսկ էրուարդ Շարմազանովը, նոյեմբերի 30-ին լրագրողների հետ հանդիպմանը մանրամասնելով իր դեկավարի ելոյթը, նշել էր, թէ Սերժ Սարգսեանի խօսքերը վերաբերում էին Լեռն Տէր-Պետրոսեանին:

«Ղարաբաղը իրականում յանձնողները կ'երեւան առաջիկայում, իսկ ցեղապանութիւնն ուրացողներն արդէն իսկ յայտնի են: Դրանք այն մարդիկ են, որ այժմ էլ փորձում են ուրանալ 90-ականների փառաւոր յաղթանակները»:

Որեւէ փաստաթուղթ, որ հարցականի տակ կը դնէր Ղարաբաղի շահերը, 90-ականներին չի եղել, ինչը չի կարելի ասել վերջին ժամանակաշրջանի մասին», - նկատեց Կարապետեանն ու մանրամասնեց. «Դրա վկայութիւնն է ՄԱԿ ԳԱ բանաձեւը՝ ընդունուած 2008թ. Մարտի 13-ին, ԵՆՆՎ բանաձեւը 2008թ. Յունիսին, որտեղ ճանաչուած է Ադրբեյջանի տարածքային ամբողջականութիւնը: Այս բոլոր փաստաթղթերն ընդունուել են Սերժ Սարգսեանի օրօք: Վերջինս, ի դէպ, Տէր-Պետրոսեանի կառավարման տարիներին եղել է նրա թիմի հաւատարմ անդամ եւ որեւէ դժգոհութիւն չի ցուցաբերել վարուող քաղաքականութեան առթիւ»:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԹԵԼԵԹՈՆ

Շարունակուած էջ 1-էն

ըսած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր վարչութեան հանրային կապերու բաժնի պատասխանատուներէն Արմէն Օհանեան:

Ըստ Օհանեանի, անցեալ տարուայ համեմատ դրամահաւաքին մասնակցողներու թիւը բարձրացած է: «Համահայկական Հիմնադրամի համար առաւել կարեւոր է նուիրատուների բանակի հզօրացումը: Այս առումով մենք միանշանակ առա-

ջընթաց ենք արձանագրում, քանի որ մեր նուիրատուների քանակը ուղղակի կտրուկ աճել է»:

Թելեթոնի առթիւ իր ունեցած ելոյթի ընթացքին Սերժ Սարգսեան ըսաւ. «Մենք պէտք է ապացուցենք բոլորին, որ Հայրենիք - Սփիւռք պտուակուում գոյութիւն չունի: Մենք նաեւ այս դրամահաւաքով եւս մէկ անգամ պէտք է ապացուցենք, որ Արցախը մերն է այսօր եւ մերն է լինելու մէկը միշտ: Պէտք է յուսահատեցնենք բոլոր նրանց, ովքեր այս հարցում դեռ ինչ-ինչ ակնկալիքներ ունեն»:

ԱԹԵՆՔԻ ՄԷՋ ՅՐԱՊԱՐԱԿՈՒԵՑԱԻ

Շարունակուած էջ 1-էն

ըրած են՝ «կարելի եղածին չափ շուտ աւարտին հասցնել այս աշխատանքը»:

«Հիմնարար սկզբունքներու շուրջ համաձայնութեան գալը կարելիութիւն կու տայ հասնելու՝ համապարփակ կարգաւորման եւ խաղաղութիւն, կայունութիւն եւ բարգաւաճում բերել ամբողջ տարածաշրջանին», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարները այս փաստաթղթով պատրաստակամութիւն յայտնած են վերջնական տեսքի բերել Հիմնարար սկզբունքները եւ շարունակել աշ-

խատիլ մնացեալ խնդիրներու շուրջ համաձայնութիւն ձեռք ձգելու ուղղութեամբ, հիմնուելով, մասնաւորապէս, Հէլսինքեան եզրափակիչ արձանագրութեան սկզբունքներու վրայ՝ ուժի չկիրառում եւ ուժի սպառնալիքի բացառում, տարածքային ամբողջականութիւն եւ ազգերու ինքնորոշման իրաւունք:

Հայաստանի արտաքին գործոց նախարար էրուարդ Նալբանդեան Հէլսինքեան եզրափակիչ արձանագրութեան սկզբունքներուն ներառումը համատեղ ստորագրուած փաստաթղթին մէջ նկատեց հայկական կողմի մեծագոյն յաջողութիւններէն մին:

«Առաջին անգամ նախարար-

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ «ԿԱԽՈՒԱԾ Է ԱՏՊԵՅՃԱՆԻՑ»

Թուրքիայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովում հայ - թուրքական արձանագրութիւնների քննարկումը կախուած է Ատրպէյճանից: Այդ մասին ադրբեյջանական APA գործակալութեանը ասել է յանձնաժողովի նախագահ Մեթին Երլմազը՝ յաւելելով, թէ դրանք չեն քննարկուի յանձնաժողովում, եթէ Ատրպէյճանը ինչ-որ բանից դժգոհ լինի:

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի լիագումար նիստին ներկայացնելու համար, արձանագրութիւնները նախ պէտք է քննարկուեն տուեալ յանձնաժողովում: Երլմազը թուրքիայի իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան անդամ է:

Նրա փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահն ու վարչապետը Ատրպէյճանի նախագահի հետ մշտական կապի մէջ են: «Եթէ իհրամ Ալիեւն ասի, որ գործերը հասել են որոշակի կէտի [խօսքը Ղարաբաղեան բանակցութիւնների մասին է], խնդիրները սկսում են լուծուել եւ հասունացել է ժամանակը, որ մենք էլ որոշ քայլեր անենք, այդ ժամանակ էլ մենք այդ արձանագրութիւնները կը մտցնենք յանձնաժողովի օրակարգ», - հաւաստիացրել է թուրքիայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահը:

Մեթին Երլմազը յայտնել է, որ այդ հարցը քննարկել է թուրքիայի արտգործնախարարի հետ, քննարկել են նաեւ Ատրպէյճանի գործընկերների հետ, եւ, նրա հաւաստմամբ, արձա-

նագրութիւնների հետ կապուած ոչ մի քայլ չեն անի մինչեւ Ատրպէյճանին գոհացնող փուլին հասնելը:

«Ֆրանսապրես» լրատուական գործակալութեան հետ հարցազրոյցում Ատրպէյճանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը յայտարարել է, թէ Ատրպէյճանի արձագանքը շատ աւելի կոշտ կը լինի, եթէ թուրքիան վաւերացնի Հայաստանի հետ սահմանը բացելու եւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու արձանագրութիւնները:

Միջազգային յարաբերութիւնների ամերիկացի փորձագէտ Մենկոֆն էլ հնարաւոր է համարում, որ հայ - թուրքական սահմանը բացուի մինչեւ Ղարաբաղի խնդրի կարգաւորումը: Ըստ նրա՝ սահմանի բացումը օգտակար կը լինի նաեւ թուրքիայի համար եւ պաշտօնական Անկարային հնարաւորութիւն կը տայ մեծացնել իր ազդեցութիւնը տարածաշրջանում, ինչպէս նաեւ կուժեղացնի թուրքիայի դիրքերը Եւրամիութեանը անդամակցութեան հարցով բանակցութիւններում:

Շաբաթակազբին Մոսկուայում կայացած հանդիպման ժամանակ Հայաստանի եւ թուրքիայի խորհրդարանների նախագահները քննարկել էին նաեւ արձանագրութիւնները ողջամիտ ժամկետներում վաւերացնելու հարցը:

Հայաստանում երկրի նախագահը արձանագրութիւնները ներկայացրել է Սահմանադրական դատարան:

ՀՀԿ-Ի ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Շարունակուած էջ 1-էն

Լորելն է եւ թէ, 2008 թուականի նախագահական ընտրութիւններուն յաջորդած իրադարձութիւնները ցայտուն ցուցադրեցին անկախութեան տարիներուն ձեւաւորուած պետական, քաղաքական եւ հասարակական կառուցները «ոչ լիարժէք կայացուածութիւնն ու ընդհանուր թուլութիւնը»:

Իր ելոյթի տնտեսական բաժինով Սերժ Սարգսեան կարծիք յայտնեց, որ թէեւ Հայաստանը չէ կրցած խուսափիլ 18 սոկոսի հասնող տնտեսական անկումէն, սակայն յաջողուած է գերծ մնալ ընկերային ոլորտի բացասական զարգացումներէն:

Անդրադառանալով հայ-թրքական արձանագրութիւններու վաւերացման գործընթացին, Սարգսեան, յայտնեց որ, Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորումը չի նշանակէր Հայոց Յեղասպանութեան ուրացում: «Դա մի գործընթաց է, որում, ինչպէս հայելու մէջ, պէտք է արտացոլուի կողմերի լրջութիւնը»:

Ղարաբաղի մասին խօսելով ՀՀԿ ղեկավարը ըսաւ. «Ցանկացած ոտնձգութեան պատրաստ ենք արձագանգել ամենակոշտ միջոցներով», ակնարկելով Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի՝ վերջերս կատարած յայտարարութիւններուն, թէ բանակցային գործընթացը արդիւնքներու չհասնելու պարագային Ատրպէյճան պատրաստ է խնդիրը

լուծել ուժային ճանապարհով: «Ղարաբաղեան հակամարտութեան բոլոր կողմերի միջեւ համաձայնութիւնը պէտք է մէկ փաթեթի մէջ ներառի բոլոր հարցերի լուծումներն ու միջազգայնօրէն ամրագրուած այն մեխանիզմները, որոնք կ'ապահովեն այդ լուծումների իրականացումը», - ըսաւ ան:

Հայաստանի մէջ շարունակաբար տեղի ունեցող ընտրախախտումներու մասին խօսելով Սերժ Սարգսեան յայտնեց որ,

ընտրական համակարգի, քաղաքական կուսակցութիւններու, քաղաքացիական հասարակութեան ինստիտուտներու ոչ լիարժէք կայացածութիւնն է, որ հնարաւորութիւն կու տայ գլուխ բարձրացնելու չարութեան ու անհանդուրժողականութեան:

Իշխող կուսակցութեան ղեկավարի այս խօսքերով հանդերձ, համազումարին ներկայ եղող լրագրողները ակնատես եղան, թէ ինչպէս, քուէարկութենէն առաջ իսկ, դահլիճի մուտքին քուէներ կը դրուէին անտուկներուն մէջ:

Թեկնածուներու առաջադրումէն յետոյ սկսած օրինական քուէարկութեան ժամանակ, ՀՀԿ մամուլի խօսնակ էրուարդ Շարմազանով, պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ ինչ պիտի ընեն ժամանակէն առաջ քուէատուփերու մէջ յայտնուած ծրարներուն, ըսած է. «Դրանք անվաւեր են ճանաչուելու»:

րական այս կոնֆերանսի շրջանակներում յայտարարութիւնն է արուում, որտեղ նշում է Յ սկզբունքների մասին: Յոստով եմ, որ յայտարարութիւն կը լինի նաեւ նա-

խարարական կոնֆերանսի կողմից, այսինքն Յ6 երկրի կողմից», - «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է ՀՀ արտաքին գործոց նախարար էրուարդ Նալբանդեան:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՉԱՄԲԻՒՐԸ

ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Վերջին տարեշրջանին հայ-թրքական յարաբերությունները բնականոնացման ծուռ ուղեկորումը ծանրորեն հարուստացրեց հայության իրաւունքներն ու շահերը: Շեշտակիորէն թրքական շահերու օգտին ձեւակերպուած են նախաստորագրուած հայ-թուրք Արձանագրութիւններու գլխաւոր դրոյթները – Թուրքիոյ կողմէ միակողմանի կամայականութեամբ փակուած սահմանի իբր թէ առանց պայմանի երկկողմ բացում, միակողմանիորէն խզուած դիւանագիտական յարաբերութիւններու հաստատում, բռնութեամբ եւ անիրաւականօրէն պարտադրուած սահմաններու անարդար իրաւականացում, հողային իրաւացի պահանջներէ ընդմիջու չրաժարում, Թուրքիոյ եւ աշխարհի կողմէ հայոց Յեղասպանութեան ճանաչման այժմու միջազգային գործընթացի կասեցում եւ ապաճանաչման հակառակ, լուրջան ակնարկուած դարաբաղեան անկախութեան լուծարում: Զանգուածային լրատուամիջոցները լի են թեր ու դէմ ելոյթներով, վերլուծումներով ու կոչերով: Նուազ ծանօթ է այն քայքայիչ անդրադարձը զոր Թուրքիա-Հայաստան մերձեցումի այս թրքանպաստ, հայալինաս գործընթացը ներկայիս կ'ունենայ հայրենիքի եւ սփիւռքահայութեան փոխ-յարաբերութիւններուն վրայ: Իրենց բովանդակութեամբ ու ոգիով, այս փոխ-յարաբերութիւնները զգալիօրէն թուլացած են անցնող տասնամեակին ու մտահոգիչ վատթարացման փուլը թեւակոխած՝ 2009 թուականին:

Ատենն է առարկայականօրէն քննարկելու եւ յստակացնել փորձելու համահայկական մեր տեսադաշտը եւ անոր ընդգրկած գլխաւոր դերակատարներու տեղերը, որպէսզի աւելի սահուն կերպով ընթանայ հասարակաց աշխատանքը: Իր՝ Սերժ Սարգսեանի եւ հայրենի այլ պատասխանատուներու վկայութեամբ իսկ, Հայաստան երեք միլիոն բնակչութեամբ աղքատիկ պետութիւն է առանց եկամուտի աղբիւրներու, իսկ Սփիւռքի հետ միասնաբար տասը միլիոնոց ժողովուրդ է մեծ ներուժով: Հետեւաբար, եթէ կը հաւատանք ամբողջ աշխարհի հայոց հոգեմտաւոր միասնութեան, եկէք միանգամ ընդմիջաւ համաձայնիք թէ անբակտեւի փոխ-կապակցութեան մէջ են

Հայաստան եւ Սփիւռք, եւ թէ անոնցմէ ամէն մէկը անտարբեր կամ օտար չի կրնար մնալ միւսի արտաքին ե՛ւ ներքին գործերուն նկատմամբ: Ի վերջոյ, Հայաստանի իշխանութեան ու ժողովուրդին համար մեծագոյն նեցուկ է սփիւռքահայութիւնը՝ քաղաքական, տնտեսական, ֆինանսական-ներդրումային, գիտական, կրթական, զբօսաշրջական եւ բազմապիսի կարեւոր այլ նկատումներով: Փոխադարձաբար, Սփիւռքի համար կենսական նշանակութիւն ունի Հայաստանի իշխանութեան որդեգրած ե՛ւ ներքին, ե՛ւ արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը, քանի ստոր հետ սերտօրէն առնչուած են զինք չարչրկող հիմնահարցերու գալիք զարգացումները – հայ-թրքական յարաբերութիւններ, Յեղասպանութեան ճանաչում, ոտնակոխուած իրաւունքներու ձեռքբերում, հայապահպանում, եւ այլն: Հայրենաբնակ մեր հարազատներուն համար ծայր աստիճան վիրաւորական է երբ սփիւռքահայը կ'անտեսէ անոնց դժնդակ կացութիւնը եւ հայրենասիրութեան քարոզ կը կարդայ, մինչ անոնք դեռ կ'ապրին երկրաշարժի եւ շրջափակման արհաւիրքը: Միւս կողմէ, սփիւռքահայութեան հանդէպ զգայնութեան արհաւոր պակաս մը կը շեշտուի երբ Հայաստանի գործող ինքնակոչ նախագահը, հայ-թուրք Արձանագրութիւններու խեղկատակութեամբ հայոց Յեղասպանութիւնը «պատմական հարթութեան վրայ» արածող «պատմաբաններու» փուռիկային ծամոնի (bubble gum) վերածելէ ետք, աշխարհացրիւ հայութեան իբր թէ կարծիքները լսելու միտող մեծաշեփոր զբօսաշրջութեան նախօրեակին կը յայտարարէ թէ այդ Արձանագրութիւնները որեւէ փոփոխութեան կամ վերատեսութեան ենթակայ չեն: Նոյնպէս, զգայնութեան նոյն պակասը ցաւագին կը բախի մեր ականջներուն երբ ընդդիմութեան՝ ՀԱԿ-ի առաջնորդը կը յայտարարէ թէ Յեղասպանութիւնը գաղափարախօսական հարթութեան ինդիք է (ա՛խ այս լայրծուն հարթութիւնները) եւ որեւէ կապ չունի ու՛շալ (իրական) քաղաքականութեան ու Հայաստանի իրական շահերուն հետ:

Եղա՞ւ ասիկա:
 Չեղա՞ւ, պարոն ինքնակոչ նախագահ:
 Չեղա՞ւ, պարոն առաջին նախագահ եւ ընդդիմութեան առաջ-

նորդ:
 Առաջ քաշուած արտաքուստ բանիմաց այս հարթութիւնները, թոյլ տուէք ըսեմ, հապճեպ ու կամայական կը հնչեն: Անոնք կապ չունին հայոց պատմութեան հետ: Չեն առնչուիր յատուկ հայկական «ուշալ» քաղաքականութեան ու Հայաստանի ճշմարիտ շահերուն հետ: Իսկ ամենէն կարեւորը – անգամ մը եւս թոյլ տուէք չիչեցնեմ – զուտ պատմական կամ զուտ գաղափարախօսական հարթութիւններէ շատ հեռու՝ բիրտ իրականութեան արիւնոտ հարթութեան վրայ տեղադրուած են թուրք դահիճներու յղացած, կազմակերպած, իրագործած, մինչեւ այսօր ժխտած եւ ուրացած Յեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերը: Իսկ ա՛լ աւելի արհաւիր ու հեզնականը՝ մինչ դուք, ձեր «իրապաշտ» գործիմացութեամբ, դահիճներուն համար անպատժելիութեան ու փախուստի պատմական կամ գաղափարախօսական հարթութիւններ կը ձեւակերպէք, անոնք՝ դահիճներն ու իրենց ժառանգորդները (տեսնել Տաւութօղլուի դեղին ժպիտները երբ Նալպանտեան անժպիտ կը ստորագրէր Արձանագրութիւնները) անխնայ կը խստացնեն ձեզի ուղղուած պահանջները՝ որպէսզի ձեզ եւ հայրենիքը անգամ մը եւս հասցնեն անդունդի եզրին:

Եթէ ամբողջ աշխարհի հայութեան միայն 30 տոկոսը ամփոփուած է ներկայ Հայաստանի նեղլիկ սահմաններէն ներս եւ 70 տոկոսը սփռուած է աշխարհով մէկ, կը նշանակէ թէ – առանց տարուելու կարեւորութեան ամուլ խաղով – հայութեան ճակատագրի որոշման մէջ իր կարեւոր կշիռն ունի սփիւռքահայութեան տեսակէտը:

Բայց եթէ Յեղասպանութիւնը զուտ պատմական կամ գաղափարախօսական հարթութեան ինդիք է եւ ուրեմն եթէ որեւէ կապ չունի Հայաստանի ուշալ քաղաքականութեան (realpolitik) կամ իրական շահերուն հետ, ապա ասկէ պէտք է յանգիլ սա անհեթեթ, անընդունելի եզրակացութիւններուն.

1. Թէ՛ Յեղասպանութեան հետեւանքով իր բազմահազարամեայ արմատներէն բրտօրէն պոկուած աշխարհացրիւ սփիւռքահայը, իր տուած մէկուկէս միլիոն նահատակներով ու դեռ չսպիտացած վէրքերով, Հայաստանի նորանկախ պետութեան համար էապէս պատմական հարթութեան վրայ տարուբերող արտառոցութիւն մըն է (եւ, խօսքը մէջերնիս, Հայաստանի եւ իր հարեւաններուն համար մնացուն «գլխացաւանք» մը): Լաւա-

գոյն պարագային, միայն գաղափարախօսական նպատակներու կրնայ ծառայել ան եւ որեւէ շոշափելի շահ չ'ապահովեր Հայաստանին: Կարճ՝ խորթ գաւակ մը կամ օտարոտի տարր մը որուն արտօնուած չէ միջամտել երկրի ներքին գործերուն ու խանգարել անոր բարի դրացիներուն անդորրը: (Հարց տուող չկայ թէ ինչպէ՞ս կրնան բարի համարուել այն դրացիները որոնց վերապրող զոհն է ան եւ որոնց ոճիրներուն հետեւանք է «խանգարիչ» սփիւռքահայու իր կարգավիճակը՝ երբ կարօտով կ'երագէ հուրով ու սուրով իրմէ խլուած հայրենի տունը): Հայաստանի լայնախոս իշխանութիւնները անշուշտ չեն մերժեր պատմութեան լուսանցքին տեղափոխուած իրենց խորթ եղբօր նիւթական մասնակցութիւնը հայրենիքի եւ մանաւանդ անոր իշխանաւորներու բարեկեցութեան ֆոնտին: Վեհանձնութիւնը, սակայն կանգ կ'առնէ այստեղ, քանի Սփիւռքի կէս-հայր իրաւունք չունի միջամուխ ըլլալու իր հայրերէն ժառանգ ձգուած հայրենիքի ներքին գործերուն:

2. Թէ՛ Հայաստանի իրական շահերը ներկայիս այլեւս չեն համընկնի Սփիւռքի իրական շահերուն հետ: Իր հարեւաններուն հետ խաղաղ համակեցութեան համար Հայաստան իր պետական շահերու ցանկէն դուրս հանած է Յեղասպանութեան ճանաչումը՝ սփիւռքահայութեան պահանջներու կիզակէտը: Այլ խօսքով, տարածաշրջանի աշխարհաքաղաքական պայմաններուն բերումով Հայաստան չի կրնար իր հանգիստը խոտովել կամ ապահովութիւնը վտանգել՝ գերագանցապէս սփիւռքահայութիւնը յուզող Յեղասպանութեան խնդիրը առաջ քաշելով: Ասկէ ինքնաբերաբար կը հետեւի թէ Սփիւռքը եւս ստիպուած է առանձինն իր գլխուն ձարին նայիլ՝ առանց ակնկալութիւններ ունենալու Հայաստանէն եւ առանց փորձելու նշանակալի մասնակցութիւն բերել Հայաստանի ներքին գործերուն: Ասիկա իր լրումին կը հասցնէ Թուրքիոյ վարչապետ Ռէճեփ Թայյիփի հրտոդանի վաղեմի երազը՝ Հայաստան առանց Սփիւռքի:

3. Թէ՛ Հայաստանի գործող ապօրինի իշխանութիւններն ու արդարութեան համար պայքարող ընդդիմադրութիւնը կը նախընտրեն – կամ ստիպուած են – դիրքորոշուել յանուն քաղաքական «իրապաշտութեան» եւ ընդդէմ իտէալապաշտ գաղափարախօսութեան: Այս խոցելի ձեւակերպումէն մեկ-

Շաքր էջ 17



Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association



A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
 CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
 FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԲԵՔ ՈՒՅ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԵՐԿԱԹԱԳԾԻ ԵՐԹՈՒՂԻՆ

Հայ-իրանական յարաբերութիւնները վերջին տարիներին բաւական աշխուժացել են, որն արդիւնք է, այն բանի, թէ միջպետական համագործակցութեան մէջ տնտեսական նշանակութիւն ունեցող ծրագրերի իրականացումը կարեւորութեամբ է ընկալուած: Իրան-Հայաստան գաղատարը, որի աշխատանքներն արդէն իսկ աւարտուել են, տնտեսական համագործակցութեան միայն մի մասն է: Հայաստանի տարածքում նաւթավերամշակման գործարանի ու նաեւ երկաթգծի կառուցումը, անշուշտ նոր լիցք կարող են հաղորդել այս յարաբերութիւններին:

Միեւնոյն ժամանակ, պէտք է նշել, որ այս ծրագրերի իրականացումը չի կարող գոտս հայ-իրանական յարաբերութիւնների մաս հանդիսանալ: Դրանց իրագործումն անմիջականօրէն առնչուած է տարածաշրջանային եւ որոշ առումներով համընդհանուր ռազմավարութեան հետ, որն ունի քաղաքական եւ տնտեսական բաղադրիչներ:

Իրանը Հայաստանին կապող երկաթգիծը արդէն իսկ իրական նախագիծ է վերածուած: Պաշտօնական Երեւանը յայտարարում է, որ հայ-իրանական երկաթգիծը Հայաստանի իշխանութիւնների առաջնահերթութիւններից է, որովհետեւ հաղորդակցական այդ կարեւորագոյն ուղին շրջափակուած ու ծովագուրկ Հայաստանի համար կարող է ելք հանդիսանալ դէպի արտաքին աշխարհ, ինչը ներկայումս այնքան կենսական է երկրի համար:

Փորձագէտների համաձայն, տարածաշրջանի եւ աշխարհի բարդ տնտեսական եւ աշխարհաքաղաքական իրադարձութիւնները ստիպել են Հայաստանին շուտափոյթ դիմել գործնականի, քանի որ այն երկրի համար ռազմավարական նշանակութիւն ունի եւ դրա շինարարութիւնը պէտք է սկսուեր վաղուց: Նախնական հաշուարկներով երկաթգծի շինարարութիւնը կարող է արժենալ մօտ 2 միլիարդ տոլար եւ տեւել 5-6 տարի: Տեխնիկատնտեսական հիմնաւորման համաձայն, երկաթգծի երկարութիւնը կը լինի առաւելագոյնը 450 քիլոմէթր, որից 60-80 քիլոմէթրը կը լինի Իրանի տարածքում, սահմանից ձգուելով մինչեւ Մարանդ:

Իրանի երկաթուղային պաշտօնատարները նշում են, որ իրանական կողմը պատրաստ է մասնակցելու երկաթգծի շինարարութեանը եւ, շեշտելով նախագծի կարեւորութիւնը Հայաստանի եւ իրանի համար, միանշանակ ընդգծում են, թէ դա իրանի առաջնահերթութիւնների շարքում է գտնուած:

Գոյութիւն ունի նախագծի երեք տարբերակ: Հայաստանի համար նախընտրելի տարբերակը այն է, որն սկսում է Գեղարքունիքի Գազարին գիւղի գործող երկաթուղակայարանից, որ Գաւառ եւ Մարտունի քաղաքներով անցնելով գնում է դէպի Վայոց Ձորի Ջերմուկ, ապա հայ-իրանական սահմանում գտնուող Մեղրի քաղաք: Կառուցման աշխատանքները կը սկսուեն այն ժամանակ, երբ վերջնականապէս որոշուած կը լինի լաւագոյն տարբերակը:

Առաջին նախագծով մինչեւ Մեղրի երկաթուղին կը կառուցուի Երասխ կայարանից, երկրորդով՝

Վարդենիսից, երրորդով՝ Գազարինից: Այս նախագծերը տարբերուած են երկարութեամբ: Առաջինը՝ 443 քմ., երկրորդը՝ 450 քմ. իսկ երրորդը՝ 397 քմ. է:

Երկաթգծի իրականացման կարեւորութիւնը՝ որպէս քաղաքական քայլ, արդէն իսկ պարզ է, սակայն տնտեսական առումով որքանով կ'արդարացնի սպասելիքները, դա էլ մի այլ խնդիր է: Այնուամենայնիւ, կասկած չկայ, որ այն տնտեսական մնայուն արժէք է դառնալու:

Կատարուած ուսումնասիրութիւնները պարզել են, որ Իրան-Հայաստան երկաթուղու կառուցման համար կը պահանջուի 1.5ից մինչեւ 2 միլիարդ տոլար:

Ծախսերի առումով Հայաստանի Կապի ու տրանսպորտի նախարար Գուրգէն Մարգսեանը նշեց. «Սոթքի հատուածի դէպքում, չնայած աւելի քիչ գումար կը ծախսուի, քան Մարտունիի եւ Երասխանի դէպքում, սակայն այս հատուածում կան շատ այլ խնդիրներ: Օրինակ, Սոթքի գիծը բաւականին լուրջ ներդրումներ է պահանջում: Այսօր մեր երկաթուղու հաւատարմագրային կառավարիչն իր ծրագրով նախատեսել է այդ գծի վրայ ներդնել 250 միլիոն տոլար, այն դէպքում, որ այն ծառայի միայն ներկայի համար: Եթէ հետագայում մենք այդ գծով աւելի մեծացնենք բեռնափոխադրման շրջանառութիւնը, ապա այդ գնից 2-3 անգամ աւելի ներդրումներ կը պահանջուեն: Բացի այդ, ինչեալ հատուածում շատ ուելսեր փոխարինման կարիք ունեն, իսկ շատ հատուածներ լճի բարձրացման հետեւանքով պէտք է փոփոխութեան ենթարկուեն»:

Այս նախագծով նաեւ հետաքրքրուած են այլ երկրներ, ինչպէս Ռուսաստանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը:

Առաջին հերթին դրա իրականացման համար կեանքի է կոչուել եւսկողմ աշխատանքային խումբ,

որի նպատակն է մշակել նախագիծ՝ Հայաստան-Իրան երկաթգծային ուղիղ հաղորդակցման համար: Երկաթուղին կը լինի ամենակարճ ցամաքային ուղին:

Պարսից Ծոցից, Հնդկաստանից եւ Չինաստանից դէպի Եւրոպա:

Նախագծի հիմնական արգելքները մի կողմից ԱՄՆ-ն է, իսկ միւս կողմից ֆինանսաւորման խնդիրները:

ԱՄՆ-ի վարչակազմը ուսումնասիրում է Թեհրանի հետ յարաբերութիւններում նոր մօտեցում մշակելու հնարաւորութիւնը, որ աւելի լաւատեսական է դարձրել Հայաստանի դիրքորոշումն այս հարցում: «Ուաշինգթոնը երբեք չի խոչընդոտել Իրանի հետ Հայաստանի յարաբերութիւնները, ընդ որում Հայաստանն այս առումով միակ երկիրն է տարածաշրջանում», - ասել է Կովկասի ինստիտուտի փոխ-տնօրէն Սերգէյ Մինասեանը:

Ասիական զարգացման պանքն էլ իր համաձայնութիւնը տուել է վարկ տրամադրելու համար: Նախագծի ֆինանսաւորման համար խօսուել է նաեւ Համաշխարհային պանքի հետ:

Հայաստանում Իրանի դեսպան Սէյեդ Ալի Սադաթեանը մի հարցազրոյցի ժամանակ նշել է, թէ հայ-իրանական նախագծերը, ինչպէս գազամուղն է եւ երկաթուղագիծը, տարածաշրջանային նշանակութիւն ունեն եւ պատահական չէ, որ դրանց նկատմամբ հետաքրքրութիւն են ցոյց տալիս Ռուսաստանը, Ղազախստանը եւ Թուրքմենստանը: Նա այնուհետեւ շեշտել է, Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը ռազմավարական մեծ նշանակութիւն ունեցող նախագիծ է՝ ոչ միայն երկու երկրների, այլեւ ամբողջ տարածաշրջանի համար: Նա, ի դէպ նշել է, թէ այն կարող է համարուել բեռնափոխադրումների շատ յարմար երթուղի:

Իրան-Հայաստան երկաթգծի կարեւորութիւնը առաւել շօշափելի լինելու համար հետաքրքիր է նաեւ անդրադառնալ քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանի այս մասին կատարած արտայայտութեանը: Նա

ասում է. «Վրաստանը այլեւս տրանզիտային երկիր չէ, եւ այլեւս ցանկացած ծրագիր, որը մեր տարածաշրջանում կը նախատեսեն հօր երկրները, կը շրջանցի վրաստանը, եւ Հայաստանը կարող է պոտենցիալ դառնալ՝ որպէս վրաստանին փոխարինող երկիր»: Նրա կարծիքով՝ երկաթգծի կառուցման պլանաւորման պոտենցիալը ստիպում է Թուրքիային սկսել շարժուել, քանի որ բոլորը գիտեն, որ Իրանը 1.5 միլիարդ տոլար ունի կառուցելու համար այդ երկաթուղին, մենք չունենք, եւ դա բոլորը գիտեն: Սա մի քաղաքական ծրագիր է, որի համար երկիրը հեշտ է փող տալիս, քան այլ ծրագրերի համար: Նա, ի միջիայլոց իր միտքը բացատրելով, թէ ինչու է այդ ծրագիրը քաղաքական համարում, ասաց, որ եթէ Հայաստանը հինգ տարուց յետոյ Իրանի միջոցով յատակ ցամաքային կապ ունենայն աշխարհի հետ եւ դառնայ ինքնաբաւ սիստեմ, Թուրքիայի ճնշումը հայաստանի վրայ ինքնաբերաբար կը նուազի:

Քաղաքագէտ Ստ. Գրիգորեանը այնուհետեւ հետաքրքիր գուգահեռներ անցկացնելով ՆԱԲՈՒ-40 ծրագրի հետ նշում է. «Դրանք միայն բառեր են, նախագիծ չկայ, ծրագիր չկայ», բայց եւ այնպէս ազդում է բոլոր երկրների քաղաքականութեան վրայ: «Միայն այն, որ մենք կարող ենք նման երկաթգիծ կառուցել, մեզ համար շատ դուներ են բացուած»:

Ուշագրաւ է վարչապետ Տիգրան Սարգսեանի այս մասին յայտարարութիւնը, թէ կառավարութիւնը քաղաքական որոշում է կայացրել, եւ կառուցման ուղղութեամբ արդէն աշխատանքներն սկսուել են: Ֆինանսաւորումը դեռեւս իրականացում է պետական միջոցների շնորհիւ:

Այսպիսով կարելի է ակնկալել, որ յառաջիկայ տարում լուրջ առաջընթաց կ'արձանագրի այս ուղղութեամբ:

«ՅՈՅԱ» երկշաբաթաթերթ
Թեհրան

Ընդհանրական Նախաճաշ

Կը հրամցուի՝

ՖՈՒԼ եւ ԴԱՄԱՍԿՈՍԵԱՆ «ՖԵԹԹԷ»

Կազմակերպութեամբ՝

ՄԱՄԻՆԱ

Ծաբաթաթերթի Օժանդակ Մարմնի


Կիրակի, 13 Դեկտեմբեր, 2009

Առաւօտեան ժամը 9:30-էն սկսեալ

Հ.Մ.Մ-ի «Կարօ Սողաւալեան» սրահին մէջ

1060 N. Allen Ave., Pasadena

ՆՈՒԷՐ՝ 10 ՏՈՒԱՐ



ՔԱՂՈՒԹԱՅԻՆ

ՆՐԱՆՔ ԿԱՐԾԵՍ ՊԱՐՈՒՄ ԷԻՆ ԿԱՊՈՒՏԱՉԵԱՅ ՍԵՒԱՆԻ ՊԵՍ

ԱՆԱՀԻՏ ԵՐԵՄԵԱՆ

Իւրաքանչիւր արուեստ պէտք է ունենայ իր իւրաքանչիւր լեզուն: Պէտք է ունենայ իր համն ու հոտը: Իր առաքելութիւնը: Արուեստներ, որոնք վերածուած են ազգային հպարտութեան եւ դառնում են մի ամբողջ Հայաստան: Արուեստը քանակ չի պահանջում: Որակն է կարեւոր:

Գրել արուեստի մասին, այն էլ պարարուեստի, դժուարին եւ չափազանց պատասխանատու խնդիր է, քանզի մեր օրերում եւ պարարուեստի աշխարհում հանդէս են գալիս յաճախ մարդիկ, ովքեր այն վերածել են հեշտ եկամուտի ապրելակերպի մի ձեւի, երբ կամայ թէ ակամայ ոտնահարում են նաեւ

Եկել էին մեծ ուրախութեամբ: Եկել էին ազատագրուած տան խցերից, իրենց օրը ապրելու համար: Եկել էին իրենց պալատներից, իրենց օրը վայելելու համար: Եկել էին իրենց մենութիւնը մտերմիկ միջավայրում անցկացնելու համար: Եկել էին հոգեկան ջերմութիւն ստանալու համար:

Արթուր Ասատրեան: Մի լուռ ու մունջ արուեստագէտ: Հաշտուելով իր լույս ու մութ օրերի հետ, 16 տարի է դեկավարում է իր (Image Dance Group) դասական եւ ժողովրդական պարախումբը:

Եւ այսպէս... պարն ու Արթուրը միաձուլուել են իրար: Դարձել են երազ ու շղթայուել յաւիտենապէս: Դարձել են թեւ ու թիկունք: Նրա ստեղծած պարախումբը ար-



ազգային արժէքները:

Բոլոր արուեստագէտների ստեղծագործական ակունքները բխում են մանկութեան եւ պատանեկութեան յիշողութիւններից: Տարիների ընթացքում նրանք կուտակելով մեծ կենսափորձ, ենթարկուելով ճակատագրի հարուածներին, համտեսելով տառապանքների դառնութիւնն ու յուսահատութիւնների համը, հասունանում, կազմաւորում, ամրապնդում եւ ձեռք են բերում իրենց ինքնութեան փիլիսոփայութիւնն ու համոզմունքները: (Նորից եմ ասում, խօսքս իսկական արուեստագէտների մասին է, ոչ ողորմելի արուեստագէտների, լինեն դրանք գրող, երգիչ, ասմունքող, նկարիչ, բեմադրիչ, թատերագիր...):

Փոքրաշունչ նախաբանից յետոյ, ուզում եմ ընթերցողի ուշադրութիւնը սեւեռել մի արուեստագետի, Հայաստանի օպերային եւ բալետի թատրոնի մենակատարներից Արթուր Ասատրեանի վրայ:

Որպէս նախկին ուսանող Լիբանանի Միսիթարեան Վարժարանի եւ աշակերտը Հայր Օգոստինոսին, չեմ կրնար անտարբեր մնալ, այս ծերունի 88 ամեայ վարդապետին դէմ կատարուած անարդարութեան, անպարկեշտութեան եւ խաբէութեան:

Զկայ մէկը որ տեղեակ չըլլայ Հ. Օգոստինոսի եւ իր կատարած

Շարք էջ 17

NEW YEAR'S DINNER DANCE AFTER LAST NEW YEAR'S HUGE SUCCESS !! BEAT ENTERTAINMENT PRESENTS ONE MORE TIME THE NATION'S MOST EXPERIENCED DJ... HeartBeat dj Thursday December 31st 2009 IMPERIAL PALACE 1175 N. Lake Ave. Pasadena, CA 91104 Doors open 8:00 pm Incredible show and surprises Gourmet 20 kinds of appetizers & 3 main courses Bottle of black or Grey Goose, red or white wine included Tickets \$100 and \$125 For more information please contact: Vasken 818.288.7188 or 818.956.1555 Email: djvasken@yahoo.com PROUD SPONSORS PLAYBOY ENERGY DRINK PAOLO GIARDINI Eurasian Automotive Giorgio Cosani Gianni Suit Warehouse MEN'S SUIT OUTLET SARKIS PASTRY

ԱՐՁԱԳԱՆԳ՝ Ս. ՅԱԿՈԲ ՅԱՅՅ. ԱՌԱՔԼ. ԵԿԵՂԵՑԻՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲԵՆԱՅԻ ՅԱՅՐԱՊԵՏԻ ՏՕՆԸ

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին հարուստ եղած է ոչ միայն իր շարականներով եւ դէպի Արարիչին ուղղուած աղօթքներով, այլ նաեւ նոյն այդ շարականներն ու աղօթքները յօրինող վանականներով, հոգեւորականներով, որոնց այս մեծ գործին առ ի երախտագիտութիւն, մեր ժողովուրդը գանձում է սուրբերու դասին շարած է, իր դարաւոր պատմութեան ընթացքին:

Անկախ այս բոլորէն, քրիստոնեայ այլ եկեղեցիներու նման, հայ ժողովուրդը իր հաւատքէն մեկնած եւ անոր հանդէպ ունեցած եւ որդեգրած սէրէն եւ յարգանքէն, իր հոգեական տունն ալ հարստացուցած է բազմազան սուրբերով եւ որոնց համար ուխտի օր նշանակած է: Օրինակաները բազմազան են:

Ահա այդ սուրբերէն մէկն է Յակոբ Մծբնայ Հայրապետը, որուն անուան տօնախմբութիւնը այս տարի կը գուգադիպի Դեկտեմբերի 13-ին:

Արդ, Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի անուան տօնին եւ Լոս Անճելըսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ անուանակոչման եւ հիմնադրութեան 68րդ տարեդարձին առթիւ նոյն այս եկեղեցւոյ մէջ՝ 4950 W. Slauson Ave. Los Angeles, CA 90056, Շաբաթ, 12 Դեկտեմբեր, 2009-ին տեղի պիտի ունենայ նախատօնակ՝ երեկոյեան ժամը ժամը 7ին:

Ապա յաջորդ օրը, Կիրակի, 13 Դեկտեմբեր, 2009-ին, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ տեղի պիտի ունենայ եւ որուն աւարտին հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի, եկեղեցւոյս բարերար հին ու նոր ննջեցե-

լալներուն հոգիներուն համար: Նոյն օրը պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան, առաջնորդ՝ Հայց. Առքլ. Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի:

Տեղի պիտի ունենայ նաեւ վերջերս Արցախէն յատկապէս ապապրուած չորս մեծ խաչքարերու օժով՝ ձեռամբ առաջնորդ սրբազան հօր, որոնք պիտի տեղաւորուին եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Այս առթիւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու Ծխական խորհուրդը կը հրաւիրէ մեր գաղութի բարեպաշտ գաւազները ու յատկապէս բոլոր Յակոբ անուն կրողները, ներկայ գտնուելու եւ մասնակցելու Ս. եւ Անմահ Պատարագին եւ լսելու առաջնորդ սրբազան հօր պատգամը:

Ապա նոյն օրը, յաւարտ Սուրբ եւ Անմահ Պատարագին, եկեղեցւոյ «Կոկեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ աւնադական ճաշկերոյթ-տօնախմբութիւնը՝ նուիրուած եկեղեցւոյ 68-րդ ամեակի անուանակոչութեան:

Պիտի գործադրուի գեղարուստական պատշաճ յայտագիր:

Ձեռնարկին, առ ի գնահատանք եւ երախտագիտութիւն՝ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Hye Sprit Award- ով պիտի պարգևատրուի եկեղեցւոյս ժրջան անդամներէն կիսա-սարկաւազ՝ Տանիէլ Ագարակեանը:

Միւրով կը հրաւիրուին մեր բարեպաշտ ժողովուրդը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը 323-295-4588 թիւին:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲԵՆԱՅԻ ՅԱՅՐԱՊԵՏԻ ԿԵԱՆՔԸ

Տ. ԱՐՇԱԿ Ա. ՔԷՆՅ. ԽԱԶՍՏՈՒՐԵԱՆ

Սուրբ Յակոբ Մծբնացի Հայրապետը ծնած է Մծբին քաղաքին մէջ, այժմու Նուսայպին-Իրաք եւ վախճանած է 338ին: Ծնունդով ասորի եղած է եւ հայկական աղբիւրներու համաձայն Գրիգոր Լուսաւորչի հօրաքրոջը՝ Խոսրովուհի որդին է:

Մանկութիւնը անցուցած է Կեսարիոյ մէջ եւ իր երիտասարդութեան առաջին տարիները նուիրած է ուսման: Հոգեւորական իր կրթութիւնը ստացած է Կեսարիոյ մէջ, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի հետ:

Օժտուած ըլլալով վարչական մեծ ու բազմաթիւ կարողութիւններով ու յատկապէս ունեցած ժողովրդականութեամբ, Անտիոքի Մեկրտոս Հայրապետը զինք եպիսկոպոս կը ձեռնադրէ պատմական Ամիթ-Տիգրանակերտ քաղաքին մէջ՝ Մծբինի աթոռին համար 330-ին: Անոր համար Ս. Յակոբ կը ստանայ Մծբնայ Հայրապետ կոչումը:

Իր մասին այլ կենսագրական մանրամասնութիւններ կը պակսին: Միայն մեզի հասած տեղեկութիւններէն կրնանք քաղել, թէ Ս. Յակոբ եղած է ճմուռ կրօնապետ եւ քրիստոնէական նախնական դարերու մեծագոյն ուսուցիչ:

Իր անուան վերագրուած են կարգ մը վարդապետական ուսուցողական գրութիւններ, ճառեր, բարոյախօսականներ, որոնք հայերէնի թարգմանուած են Ե. դարուն:

Ս. Յակոբ ըլլալով հետոք, քաջ քարոզիչ, ճգնող եւ միաժամանակ հրաշագործ մը, Նիկիոյ Տիեզերական Ա. ժողովին (325) մասնակցած է եւ մեծ համբաւ հանած:

Ան արեւելեան եկեղեցիներուն մէջ ու յատկապէս հայ եւ ասորի շրջապատէն ներս ամէնէն յարգուած սուրբերէն մէկը եղած է: Ս. Յակոբ Մծբնացի հայրապետը նկատուած է նաեւ Ուղղափառ Քրիստոնէական եկեղեցւոյ մեծ պաշտպաններէն մէկը, ընդդէմ ասորի եւ ասորիականութեան, որոնք այդ օրերուն դատապարտուած էին Նիկիոյ ժողովէն:

Մինչեւ իսկ աւանդութիւն մը կ'ըսէ, որ Ս. Յակոբ իր աղօթքներով անիծած ըլլալով Արիոսը, ան մեծ

չարչարանքով մահացած է:

Կը պատմուի նաեւ, թէ Շապուհ Բ. արքան աշխարհածաւալ իր բանակներով, 70 օրեր կը պաշարէ Մծբինը: Սակայն շնորհիւ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի աղօթքներուն եւ իմաստուն միջոցառումներուն կը ձախողի պարսկական այս արշաւանքը:

Իր տօնը կը յիշատակուի Դեկտեմբեր 12-18 գուգադիպող Շաբաթ օրուան, որուն կանխող ձմեռնային շաբաթապահքը նուիրուած է Ս. Յակոբի Պահք անունով:

Նոյնիսկ Ս. Գրիգոր Նարեկացին հիացող մը եղած է Մծբնայ Հայրապետին, որուն նուիրած է իր ներբողական գրութիւններէն մէկը:

Յոյց տալու համար Աստուածաշնչական պատմութիւններու ճշմարտութիւնը, ան փորձած է բարձրանալ Արարտի գագաթը եւ սակայն սարսափելի վերելքին ամբողջական նուաճումը անկարելի ըլլալով, բաւարարուած է Նոյեան Տապանէն կտոր մը ապահովելով վերադառնալ:

Ըստ աւանդութեան, յիշեալ առիթով Աստուածառաք հրեշտակ մը գնահատելով ցուցաբերուած գորաւոր հաւատքին եւ յամառութիւնը սրբազան նպատակին մէջ, Հայրապետին կը յանձնէ յիշեալ մասունքը, որ մինչեւ այսօր իբր սրբութիւն կը պահուի Ս. Էջմիածնի գանձատան մէջ:

Հայ ժողովուրդը, առ ի յիշատակ այս մեծ Սուրբին, դարերու ընթացքին բազմաթիւ եկեղեցիներ կառուցած եւ նուիրած է իր անուան:

Աշխարհի գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ իր անունը կրող եկեղեցիները մատաղօրհնութեամբ եւ եկեղեցական փառաշուք հանդիսութիւններով կը նշեն Ս. Յակոբայ տօնը:

Հայաստրական հին եւ սերտ յարաբերութեանց ամէնէն յատկանշական փաստերէն մէկն է իր յիշատակին յարգանքին Չերմութիւնը մեր մէջ:

Համաձայն հայկական գոյութիւն ունեցող աւանդութիւններուն, ընտանեկան յարկերու տակ եւս տեղի կ'ունենան ուրախալի ընդունելութիւններ եւ ուրախ առիթով կը շնորհաւորեն Ս. Յակոբ անուն կրողները:

ԱՍՏՈՅ ՏԵՂԱԿԱԼԸ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

Շարունակուած էջ 13-էն


մինչդեռ կապուտաչեայ հիմնադիրը նկարում է նաեւ ուղղահայեաց դիտողականութեան գործեր: Ասում է, համոզում, որ Աստուած էլ վերեներից է նայում իր մանրանկարչութեանը եւ նոյնպէս համեստօրէն լուծւում է այդ մասին: Աստուծոյ գտարիւն տեղակալ վարպետը չթուլացող եռանդով շարունակում է արարել, ստեղծագործելն այն բառը է, որ ընդգրկուն հաղորդի հաւաքական հրաշալիքը: Գլխապտոյտ գմայլանքը ձեզ հանգիստ է ի տայ: Դուք զգլխիչ ապրումների գիրկը կ'ընկնէք, կը փնտռէք սպաւորութիւնների մատեան, բայց ճմուռ գեղանկարիչը դրանից էլ է առաջ անցել, չի պահում կարծիքների տեսք, ասում է, որ եթէ յաջողուի Աստուած թոյլատրի ինքը կը սկսի վաճառել ոչ թէ նկարներ, այլ ու միայն իր ստորագրութիւնը: Եւ ճիշտ կ'անի: Անմահութեան գիրը գիտէ: Նա յամառ է, բարի է, դժգոհ է, պարզ է, ազնիւ է, բանավիճող է, ժպտերես է, որովհետեւ ինքն է համաշխարհային վերացական մանրանկարչութեան հիմնադիրը, ուրիշ ոչ ոք: Մանկութիւնը Փարիզում է անցկացրել, պատանեկութիւնը՝ Պոլսում, երիտասարդութիւնը՝ Երեւանում, իսկ ժրջան ծերութիւնն էլ Լոս Անճելըսում է անցկացնում... Ահա նրա բացառիկ կենսաքի ողբականը:

Ահա նրա է նրան մոռանալ, թէ եւ հիմնադիրները դժբախտաբար մոռացութեան են մատնուում,


բայց դոյզն-ինչ չի տրտնջում: Քանի որ Աստուծոյ տեղակալ է երկրի վրայ, իսկ Աստուած երբեք տրտնջոց չի սիրում ու տրտնջացողներին էլ չի յարգում: Հակն վահանին իր ժլատ ժամանակի առանցքն է, իր տարածութեան տրամագիծն է, իր չմահաւան շրջապատի կենտրոնաձիգ կայմն է: Մի խօսքով, մեզանում պատուախնդրութեան բոլոր ճանապարհները տանում են դէպի նա՝ վերացական մանրանկարչութեան հիմնադիրը, համայն կերպարուեստի աշխարհում: Ովքեր կը հետաքրքրուեն նրա արուեստով, կարող են իւրաքանչիւր ամսուայ առաջին Հինգշաբթի օրը, Երեկոյեան ժամի եօթից ինը լինել Կլենտէյլի կենտրոնական գրադարանի երկրորդ յարկաբաժնի մեծ սրահում, ուր գրական պարբերական միջոցառումների ընթացքում Հակն վահանին ցուցադրում է իր զարմանահրաշ արուեստի մէկ չորրորդ մասը միայն (ոչ լրիւ), տեղի անյարմարութեան մեղքով: Գրադարանը գտնուում է Կլենտէյլի Հարվըրտ եւ Լուիզ փողոցների խաչմերուկում: Խնդրեմ, համեցէք: Հաճելի պահեր էլ կ'ապրէք, կ'իմաստաւորուի ձեր հերթական երեկոն, մեծ բաւականութեամբ կը գնաք:

Խոստովանեմ, ես հպարտ եմ, որ նրա ժամանակակիցն եմ: Ինձ համար մեծագոյն պատիւ է նրան անձամբ ճանաչելն ու ստեղծագործական ընկերութիւն անելը: Փառք Աստուծուն, որ նրա նման փառահեղ տեղակալ ունի մեր կողքին:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայքայիչ քստիոք: Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցտեք: Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով: Հետաքրքրուողներէն հեռաձայնել (626) 398-0506

ՄԵԿ ԳՐԻՉԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ԻՐԱԿԱՆ ԴԵՊԵ)

ՆԵՐՍԷՍ ՏԷՐ ՄԵՍՐՈՊԵԱՆ

1986 թվականին հետեւեալ իրադարձութիւնը ինձ պատմեց մեր ընտանիքի հարազատներից տիկին «Ա. Կ.»ը, որն ստորեւ բերում էմ նոյնութեամբ:

«1935 թվական էր: Այն ժամանակ ես 14-15 տարեկան աղջիկ էի: Ապրում էինք Թիֆլիսում: Փոքր քրոջս հետ յաճախում էի հայկական դպրոց: Ես, քոյրս եւ մեր բոլոր տարեկից դպրոցականները պիոներական կազմակերպութեան անդամ էինք: Այդ թուի ամբողջ, ամէն տարիների պէս, մեր պիոներական խմբակը մեկնեց Սեւ Ծովի մօտ Կիսլովոդսկ քաղաքը, ուր պիտի մասնակցէինք ճամային աշխատանքներին: Ուրախ եւ հաճելի օրեր էին: Վաղ առաւօտից ոտքի վրայ էինք: Ամենուր խաղ էր, մարզանք ու երգ: Երեկոները երկու ժամ մեզ արտօնուած էր շրջելու քաղաքի պուրակում: Օգոստոսի շոգ օրերից էր: Քրոջս՝ «Ս»ի հետ պատում էինք գբօսայգում: Յանկարծ նկատեցինք նատարաններից մէկի վրայ նստած է ձերմակ մագերով, ծրուկազարդ, կուկիկ հագնուած մի տղամարդ: Մեր հետաքրքրութիւնը շարժուեց: Մօտեցանք, հայերէն բարեկեցիք, ապա վատահ եղանք որ հայ է, իսկ դէմքն էլ շատ ծանօթ:

- Պապիկ, ձեր դէմքը ծանօթ է մեզ, մենք ձեր նկարը տեսել ենք, կարծում եմ դասագրքում:

Նրա դէմքը պայծառացաւ, անմիջապէս պատասխանեց.

- Ես Ալեքսանդր Շիրվանզադէն եմ, երեւի դասագրքերում կարդացել էք իմ «Հրդեհ Նափթահանքում» կամ մի ուրիշ գրուածքը ու տեսել իմ նկարը:

- Այո, այո, հաստատեցինք մենք անմիջապէս, ուրախացած, չէ որ առաջին անգամ էինք հանդիպում մի հայ գրողի: Նա առաջարկեց մեզ նստել իր կողքին եւ պատմել մեր դպրոցի, դասերի եւ ընտանիքի մասին:

Երկու-երեք օրում շատ մտերմացանք ու չէինք կշտանում նրա պատմածներից: Մի երեկոյ երբ ըստ սովորութեան պատրաստուած էինք նրան հրաժեշտ տալ, նա ժխտի գրպանից հանեց իր արծաթէ գրիչը ու ասաց.

- Սա երկար տարիներ է որ ծառայում է ինձ: Եթէ վրան գրչածալը հագցնենք կը դառնայ գրիչ, իսկ մատիտ դնելու դէպքում սովորական մատիտ կը լինի: Գրիչը սրտանց նուիրում եմ ձեզ, թող նա լինի Շիրվան պապիկից յիշատակ:

Օգոստոսի 7-ն էր: Ամէն օրուայ նման երեկոյան շտապեցինք պուրակ: Նատարանը դատարկ էր: Շիրվանզադէն չէր եկել: Իսկոյն դիմեցինք քաղաքի հիւրանոցը: Մուտքի դրան մօտ ամբողջ էր հաւաքուած: Սարսուռ պատեց մեզ: Մօտեցանք հաւաքուածներին... եւ շատ շուտ իմացանք որ Ալեքսանդր Շիրվանզադէն յանկարծամահ է եղել: Սկսեցինք բարձրաձայն լաց լինել: Մէկ ժամ անց հիւանդակատեքը հասաւ եւ մեր սիրելի գրողի դագաղը տարաւ իր հետ: Հաւաքուածներից տեղեկացանք որ նրա մարմինը տեղափոխուելու էր Երեւան, ուր եւ յանձնուելու էր հողին: Վշտահար ու բեկուած

սրտով հասանք ճամբար ու քանի օր յետոյ վերադարձանք Թիֆլիս, որտեղ դպրոցական ընկերներին պատեցինք մեր հանդիպումը Շիրվանզադէի հետ ու բոլորին ցոյց տուեցինք ստացած նուէրը՝ արծաթէ գրիչը: Թաւալազոր տարիներից յետոյ, մենք էլ մեծացանք ու Թիֆլիսից փոխադրուեցինք Պաքու, ապա անցանք Իրան (Անգալի-Ղազուխ-Թեհրան): Այսօր արդէն կէս դար է անցել այն օրուանից: Այդ գրիչ-մատիտը ամենայն գուրգուրանքով պահել եմ ինձ մօտ, որպէս սրբացած մի յիշատակ»:

Ապա տիկին Ա.Կ.ը յուզուած դիմեց ինձ.

- Ուզում եմ Ալեքսանդր Շիրվանզադէի գրիչը պահ տալ քեզ: Վստահ եմ այն խնամքով կը պահես եւ հնարաւորութեան դէպքում մի օր կը տանես, յանձնես հայկական մի որեւէ թանգարանի, Հայաստան կամ Սփիւռք:

Բ

Այն օրերին արծաթեայ գրիչը ես տարայ Իրանահայ Գրողների Միութիւն եւ ցոյց տուի մեր գրչընկերներին:

1990 թիւն էր: Նոր Զուղայի Հայոց Առաջնորդարանը եւ նոյն թեմի ազգային, մշակութային, մարզական, բարեսիրական մարմինները պատրաստուած էին հանդիսաւոր կերպով նշելու բազմավաստակ բանասէր, մանկավարժ, գրող եւ ներհուն մտաւորական Լեւոն Գ. Մինասեանի հասարակական, ազգային եւ կրթական գործունէութեան 50 եւ ծննդեան 70 ամեակները: Որպէս շատ մօտ բարեկամը Լ. Գ. Մինասեանի, պատրաստուած էի մեկնել Նոր Զուղա, մասնակցելու յոբելեանական հանդիսութեանը: Վերջին պահին հիւանդութեան պատճառով չկարողացայ ներկայ լինել ու գրկուեցի հոգեկան վայելքից:

Այդ օրերին Թեհրանում էր մեծ եղբայրս հոգեբան Դր. Մեսրոպ Բալայեանը: Խնդրեցի նրան Նոր Զուղայում իմ կողմից եւս շնորհաւորի յարգարժան յոբելեարին: Հանդիսութեան գիշերը սրահում երբ ընթերցուած էին շնորհաւորական գրութիւնները, եղբայրս բեմ է բարձրանում, իր եւ իմ կողմից շնորհաւորում է յոբելեարին, ապա գրպանից հանում է գեղեցիկ մի տուփ եւ աւելացնում է,

- Սիրելի յոբելեար, այս տուփի մէջ է հայ մեծանուն գրող-դրամատուրգ՝ Ալեքսանդր Շիրվանզադէի արծաթէ գրիչը, որն այսօր թեմակալ Առաջնորդի ձեռամբ յանձնուած է ձեզ, որովհետեւ Դուք արժանի էք այդ մեծ պատուին...

Սրահը թնդում է ծափերի տարափի տակ: Յուզուած է վատաւկաշատ յոբելեարը, յուզուած են բոլորը...

Գ

Մի քանի տարի անց Լեւոն Գ. Մինասեանը որն յաճախ է այցելում Հայաստան Արծաթէ Գրիչը իր հետ տանում է մայր հայրենիք եւ յանձնում մեծանուն գրողի տուն-թանգարանին...

Այդպիսով Ալ. Շիրվանզադի արծաթէ գրիչը, աշխարհի զանազան երկիրներ թափառելով, գտաւ իր ապահով հանգրուանը... Հայաստանում...

ՎԱՐԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

((ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1, 1889Թ. - ՅՈՒՆԻՍԻ 18, 1938Թ.))

ՀԱՅ ԳՐՈՂ, ԱՐՁԱԿԱԳԻՐ

Ծնուած է Արեւմտեան Հայաստանում, սովորելով ԱՄՆ-ում եւ ապա՝ վերադառնալով յետագայում խորհրդանացուած Հայաստան, Թոթովենցը հազուագիւտ հայ գրողներից է, ում ստեղծագործութիւնների մէջ համակերպուած են արեւմտահայ, սփիւռքահայ եւ խորհրդահայ ազգային գրականութեան տարրերը: Բազմաթիւ այլ մտաւորականներին բախտակից Թոթովենցը 1938-ին ստալինեան ռեպրեսիաների զոհերից է:

Վ. Թոթովենցը ծնուել է Օսմանեան Թուրքիայի Խարբերդ գաւառի, Եփրատի ափին գտնուող Մեզրէ քաղաքում, որն Խարբերդ գաւառի կառավարութեան նստավայրն էր:

Ծնողները սերում էին Ակն քաղաքից. այսպէս Վահանի հայրը Ակնի մեծահարուստ Թոթովայեց գերդաստանից էր, որոնք 18-րդ դարում ուրիշ հայ վերապրող ընտանիքների հետ տեղափոխուել էին Մեզրէ: Վահանի ընտանիքը ունեցել է երկարակնի տուն Մեզրից Խարբերդ տանող մայրուղու վրայ, որը նշանաւոր էր որպէս հեռու երկրներից եկող-անցնող քարաւանների միակ անցուղին ու իջեւանատեղին: Հետագայում Թոթովենցը յիշում է այս մայրուղին իբրեւ «Հին հովիտեական ճանապարհ»:

19-րդ դարի վերջին Խարբերդը ապրում էր աննախադէպ տնտեսական եւ մշակութային զարգացման փուլով: Այս ժամանակ գաւառում գործում էին «Եփրատ» քոլեճը իր բարձրագոյն վարժարաններով, իսկ հենց Մեզրեյում՝ «Ազգային Կեդրոնական» վարժարանը: Պսակ վարդապետի, Երուխանի, Սիմոն Յակոբեանի, Ռուբէն Զարդարեանի եւ այլոց անձնուէր ջանքերով այն դարձել էր հռչակաւոր կրթութեան օջախ, ուր էլ ընդունուել էր Վահանը 1897 թ.:

Վարժարանում Թոթովենցը առեւտրային նուիրում էր հայերէնի ուսուցմանը եւ գրում էր բանաստեղծութիւններ, որոնք լոյս էին տեսնում վարժարանի ձեռագիր ամսաթերթում՝ մօրական Գուլումմեան ազգանունով: Վահանը իր ուսուցման վերջին տարուայ ընթացքում յաճախակիօրէն այցելում էր Խարբերդ քաղաքում գտնուող Թիկա-տիցու «Կարմիր դպրոց» անհատական վարժարանը, ուր ստացել է գրական ուղղութիւններ: Այս տարիքում Թոթովենցը խորապէս տարուած էր Դուրեանի ու Մեծարեանի քնարով, ինչը եւ ոգեշունչ էր ծառայել իր առաջին բանաստեղծական թոթովանքներին:

Աւարտելով տասնամեայ վարժարանը 1908 թ., Վահանը մեկնում է Պոլիս, որտեղ նոյն տարում լոյս է տեսնում իր «Աւերակ» գրքոյկը, իսկ մեկ տարի անց՝ «Սրինգ» ժողովածուն: 1909-ին Թոթովենցը մեկնել է Փարիզ, ապա՝ Նիւ Եորք, 1912-ին ընդունուել Ուիսքոնսինի համալսարանը, որտեղ ուսումնասիրել է գրականութիւն, պատմութիւն եւ փիլիսոփայութիւն: Այստեղ Վահանը սովորում է անգլերէն, ֆրանսերէն եւ ծանօթանում է համաշխարհային դասական գրականութեան հետ: Ուսանողական տարիներին ստիպուած է լինում իր ապրուստի փողը հայթայթել ֆիզիքական տարբեր բնոյթի աշխատանքներ, բայց հիմնականում աշխատել է մօրեղբօր արեւելեան գորգի վաճառատանը:

1915-ին մօտ 400 ամերիկահայ կամաւորականների հետ ուղեւորուած է կովկասեան ռազմաճակատ, ուր մասնակցել է ազա-

տագրական պայքարին: Յովհաննէս Թումանեանի հետ հասարակական լայն գործունէութիւն է ծաւալել, օգնել զաղթականներին:

1917-1918-ին Թիֆլիսում խմբագրել է «Հայաստան» թերթը, մասնակցել Անդրկովկասի, Կ. Պոլսի եւ հայաշատ այլ վայրերի մշակութային կեանքին: Թոթովենցի համոզմամբ հայ ժողովրդի փրկութիւնը կապուած է ուսուցողի եւ Հոկտեմբերեան յեղափոխութեան հետ: 1916-1920-ին հրատարակել է «Իմ Հօրաքոյրը» (1916), «Տոնոն» (1917) սոցիալական վիպակները, «Ողբ Անմահութեան» (1916), «Արեւելք» (1918) պոեմները, «Դոկտոր Բուրբուրեան» (1918) երգիծական վեպը, արձակ բանաստեղծութիւններ, բանասիրական ու գրականագիտական յօդուածներ, որոնց մէջ արտայայտուած է Թոթովենցի մտահոգութիւնը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ճակատագրի նկատմամբ: Դաշնակցութեան տիրապետութիւնից հրասթափուած՝ 1920-ի Մայիսին Թոթովենցը թողել է Կովկասը, մեկնել Կ. Պոլիս: Իր ինքնակենսագրականում Թոթովենցը գրել է. «Ապրեցի այնտեղ ընդամենը մի քանի ամիս եւ ճանապարհ ընկայ դէպի Հարաւային Եւրոպայի կախարդական ափերը, Արշիպելագոսի կղզիներ»:

1920-ի Դեկտեմբերին մեծ ոգեւորութեամբ ընդունել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման լուրը: 1922-ին վերադարձել է Սովետական Հայաստան: Ճանապարհին, Կ. Պոլսում հրատարակել է «Փոթորիկին մէջ» (1922) վէպը, որով անդրադարձել է համաշխարհային-պատմական մեծ իրադարձութեանը՝ յեղափոխութեան յաղթանակին: 1923-ին Երեւանում խմբագրել է «Շեշտ» երգիծական ամսագիրը, 1924-1926-ին աշխատել է Երեւանի համալսարանում, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրութիւնում: Այս շրջանում են հրատարակուել նրա «Մահուան բատալիոն» (1923), «Պողպատի ճաշ» (1924), «Նոր Բիւզանդիոն» (1925), «Մասմա ծուր» (1925), «Հրդեհ» (1927) դրամատիկական ստեղծագործութիւնները, վիպակներ, բազմաթիւ ակնարկներ, պատմուածքներ, յօդուածներ: «Նոր Բիւզանդիոն» դրաման արժանացաւ համամիութենական մրցանակի, թարգմանուեց, բեմադրուեց շատ տեղերում, այդ թւում եւ Փարիզում: 1934-ին Մոսկուայում մասնակցել է սովետական գրողների առաջին համագումարին: 1929-1936 թթ.: Թոթովենցի ստեղծագործական կեանքի առաւել արգասաւոր շրջանն է. լոյս տեսան «Ամերիկայ» (1929) պատմածաշարը, «Աղաւնիներ» (1934), «Բաց կապույտ ծաղիկներ» (1935) պատմուածքները եւ շատ այլ գործեր: Անդրկովկասում դարասկզբի յեղափոխական իրադարձութիւններն են արտացոլուած «Պաքու» (1930-1934) եռահատոր վէպում, որին բնորոշ է ժողովրդի կեանքի լայն ընդգրկումը, նրա պատմութեան, կենցաղի ու ազգային նկարագրի ռեալիստական պատկերում: Թոթովենցի լաւագոյն գործերից են «Կեանք հին Հռոմէական ճանապարհի վրայ» (1933), ինքնակենսագրական վէպը, «Հրկիզուած թղթեր» (1934), «Յովնաթան որդի Երեմիայի» (1934) վիպակները, «Երկու սուր» (1930), «Պաքու-Լոնտոն» (1930), «Մոխրակոյտ» (1936) պիեսները: Թոթովենցը մահացել է 1938 թուականին:

ԱՐԱՋԱՆԳ ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ

Շարունակում էք 14-էն

քսանամեայ մշակութային եւ կրթա- դաստիարակչական առաքելութեան Լոս Անճելըսի գաղութէն ներս: Այն ինչ որ կը պատահի այս օրերուն Միւիթարեան վարժարանի շրջա- փակէն ներս, կրկնութիւնն է 2004 թուականին պատահած տխուր դէպ- քերուն, որոնք այնքան ջիղեր մաշե- ցուցին, վարկեր մրտեցին եւ անուն- ներ վարկաբեկեցին յանուն ոչինչի, ի վերջոյ յանգելով փոխհասկացո- դութեան, անշուշտ փաստաբանա- կան հսկայական ծախսերէ ետք:

Այսօր սակայն, անցեալի բուռն երկու հակառակորդներ, Հայր Եղիա Վարդապետ Քիւրապեան եւ իրաւա- բան, Դերենիկ Քուչաքեան, չենք գիտեր թէ ինչ յատուկ եւ ծածուկ դիտաւորութեամբ, յանգած են ան- հասկնալի համաձայնութեան մը՝ միասնաբար հարուածելու այս ան- գամ ծերունի, մենակեաց եւ վատա- բողջ հոգեւորական մը: Եւ ահա իրենց նոր »առաքելութեան« մէջ, ձեռք ձեռքի տուած, կը փորձեն ամէն գնով հոգեբանական ճնշում բանեցնել աւելոր վարդապետին վրայ, իւրեւ համար անկէ վարչականի իր իրաւունքները, դիմելով ամէն տե- սակի օրինական եւ ապօրինի մի- ջոցներու:

Այս բոլորը ինծի մտածել կու տան թէ ի՞նչ է իսկական պատճառը որ այս անցեալի թշնամիները նոր առաքելութեամբ եկած են խորտա- կելու, այն ինչ որ վերջին երկու տարիներու ընթացքին, գլխաւորա- բար շնորհիւ Պր. Ոսկան Միւիթար- եանի «արտակարգ ճիգերուն» կրցաւ իրականանալ: Արդարեւ ո՞վ կրնայ չհերկորդել որ Միւիթարեան վար- ժարանի ներկայիս վայելած յաջող եւ նախանձեի վիճակը կը պարտինք Պր. Ոսկան Միւիթարեանի գիշեր ցերեկ անխոնջ աշխատանքին: Ինքն էր անշուշտ որ յաջողեցաւ խանդա- վառել աշակերտներու ծնողները, համոզելու համար գիրենք եւ իրենց գաւակները որ սիրալոյսով յաճա- խեն Միւիթարեան վարժարան:

Սրտի ցաւով չեմ կրնար անտե- սել նաեւ իրաւաբան Դերենիկ Քու- չաքեանի անձնական եւ շահադիտա- կան հաշիւները Միւիթարեան վար- ժարանի իրադարձութիւններուն կա- պակցութեամբ:

Տխուր է նշել թէ ինչպէս Պր. Քուչաքեան յաճախակի կերպով շա- հագործած է Միւիթարեան վարժա- րանի իրաւական մարմնի ծիրէն ներս ունեցած իր հանգամանքը, ինչպէս նաեւ տնօրէն եւ մեծաւոր Հ. Օգոստինոս վարդապետի բարեա- ցակամութիւնը, միամտութիւնը եւ անգլեբէն լեզուի անձնաթու- թիւներ՝ անձնական ապօրինի հասոյթներ ապահովելու դիտաւորութեամբ, նկա- տի առնելով որ ան գործի դրած է այս փաստաթուղթերը երաշխաւո- րելու համար Հայ եւ Արաբ իր շատ մը յաճախորդներուն գաղթականա- կան թղթածրարները: Նման յան- դուզն եւ ապօրինի գործելակերպով ան ո՛չ միայն խախտած է ԱՄՆ-ու Գաղթականական օրէնքները, ին- ղաթիւրած ճշմարտութիւնը նկատ- մամբ քաղաքացիական իշխանու- թիւններու, այլ նաեւ լրջօրէն վտանգի եւ օրինական ու քրէական պարտա- ւորութիւններու դիմաց դրած է Միւիթարեան վարժարանը:

Նուազագոյն վերջին երկու տա- րիներու ընթացքին, որոնց կրնամ անձամբ վկայել որպէս Միւիթարեան վարժարանի աշխատակից, կը հա- աստիացնեմ որ Պր. Դերենիկ ոչ մէկ անգամ աչցելութիւն կատարած է Միւիթարեան մեր հիմնարկէն ներս,

հակառակ որ օրէնքի ճամբով, որպէս վարժարանի վարչութեան գործա- դիր անդամ, ան՝ բարոյապէս պար- տականութիւնը ունէր գէթ տարին անգամ մը պաշտօնապէս վարչական մարմինը ժողովի հրաւիրելու:

Պր. Դերենիկ թերանալով իր այս պարտաւորութեան մէջ, ահա- ւասիկ յանկարծ գինք կը տեսնեմ առաջին ճակատի վրայ հարուածե- լու Հայր Օգոստինոսը եւ Միւիթար- եան վարժարանի աշխատակազմը: Այսպէս օրինակ, մի քանի օր առաջ երբ կը գտնուէի Հայր Օգոստինոսի բնակարանը, Պր. Դերենիկ Քուչաք- եան, հեռախօսով Հայր Օգոստինո- սին կը յայտնէր որ Միւիթարեան վարժարանի վարչութիւնը ժողով գումարած էր եւ միաձայնութեամբ որոշումներ որդեգրած էր: Հայր Օգոստինոս կ'առարկէր ըսելով թէ ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ առանց իրեն իմացնելու կրնային ժողով գումարած ըլլալ. այս հարցումին կը պատասխանէր Պր. Դերենիկ ըսելով. «Թէ Դուն կարեւորութիւն չունիս վարժարանէն ներս»: Հայր Օգոստի- նոս սիրտը բանալով ինծի կ'անդ- րադարձնէր թէ «ինչպէ՞ս կրնային այսքան անիրաւութիւն ընել ինծի դէմ. հետեւաբար՝ մտադիր եմ բո- ղոքս վատիկան ներկայացնել»: Մի քանի օր ետք, Հայր Օգոստինոս կ'իմանար ճշմարտութեան այլ ծալ- քեր իր միաբանակից եղբայր. Հայր Անդրէաս Հարմանտիկեանէն, թէ բո- լոր տարածուած լուրերը սուտ են եւ կեղծիք, որովհետեւ վարժարանի Գործադիր վարչութեան Միւիթար- եան անդամներէն, ոչ՝ Հայր Անդրէ- ասը եւ ոչ՝ ալ Հայր Սիմոն ստորագ- րած էին նման փաստաթուղթի մը տակ: Ահաւասիկ ուրեմն անգամ մը եւս կը փաստուէր իրականութիւնը թէ ինչպիսի սաղրանքներ կը ծածկ- ուէին Հայր Օգոստինոսին դէմ կա- տարուած արարքներուն տակ:

Աւելին, նոյն այս իրաւաբանն էր որ պէտք է քաջութիւնը եւ պարկեշտութիւնը ունեցած ըլլար, 2004 թուականին, կիրքերը նուազ հրահրելու, երբ Հայր Եղիա վարդա- պետ, նոյն շրջանին որպէս ընտրեալ Աբբասայր, դատ բացած էր ընդդէմ Միւիթարեան վարժարանի վարչու- թեան, որու մաս կը կազմէր նաեւ նոյն ինքն Դերենիկ Քուչաքեանը: Այս վերջինին բարոյական պարտա- ւորութիւնն էր, որպէս գիտակից Հայ իրաւաբան, կողմերուն թելադրելու որ, նման դատավարութիւն մը միայն անպատուութիւն կրնար բերել Միւի- թարեան Միաբանութեան, եւ այդ- պէս ալ պատահեցաւ իր թերացումին հետեւանքով. եզրակացութիւնը կը թողում ընթերցողներուն:

Բոլոր այս դէպքերը նկատի ունենալով, այսօր կը զարմանամ թէ Հայր Եղիա ի՞նչ թաքուն նպատակ- ներ կը հետապնդէ իր երբեմնի թշնամիին հետ պորձակցելով: Արդ- եօք հին երազնե՞ր կ'օրորուին տա- կաւին, դպրոցը փակելու եւ կալ- ուածն ալ լուծարքի ենթարկելու. ճիշդ այդ նպատակով է որ կարծէք չէ՞գոքացնել կը փորձեն բոլոր անոնք որոնք խոչընդոտ կը հանդիսանան իր ուղիին, անտեսելով գործող ան- ձերու արժանապատուութիւնը եւ ծերունի վարդապետին օրինական իրաւունքները: Ի վերջոյ ան չի՞ մտածեր արդեօք որ օր մը հաշիւ ունի տալիք իր իսկ միաբանու- թեան, որոնք այսօր անգոր եւ յաճախ անտեղիկ դէպքերու մանրամասնու- թիւններէն՝ իրենց բողոքի ձայնը կը բարձրացնեն գործվիզ կանգնելով իրենց երիցագոյն սիրելի միաբա- նին, Հ. Օգոստինոս վրդ.ին, պարզա- պէս յանուն ճշմարտութեան եւ ար-

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏՈՒԹԵԱՆ ԶԱՄԲԻՂԸ

Շարունակում էք 5-էն

նելով, անոնք, անուղղակիօրէն բայց հաստատապէս, եօթը միլիոն սիւրու- քահայութեան կը գլխնան պայքա- րելու իրաւունքը՝ սուտ պատմա- բաններուն փոխանցելով կամ, որ- պէս ոչ-ուշալ անշահ քաղաքականու- թիւն, պատմական հարթութեան վրայ մոռացութեան գամբիւղը շարտելով Յեղասպանութեան «անյարմար» խնդիրը:

Կար ատեն մը երբ թերեւս կարելի էր Յեղասպանութիւնը ժա- մանակաւորապէս դուրս պահել Հա- յաստանի արտաքին քաղաքականու- թեան հիմնական դրոյթներէն: Քա- նի քաղաքականութիւնը կարելիին հետապնդումն է, հետեւաբար անկա- իութեան սկզբնափուլին, մանա- ւանդ Հայաստանի նման խոցելի փոքր երկրի մը համար, նախընտրե- լի է ամէն բանէ առաջ լծուիլ հայրենակերտման ու հզօրացման առաջնահերթ աշխատանքին՝ հա- րեւան երկիրներու հետ վիճալարոյց կամ պայթուցիկ հարցադրումները յետաձգելով աւելի պատեհ ժամա- նակներու: Իր նախագահութեան ատեն այսպիսի քաղաքականութիւն սկզբունքային հետեւողութեամբ փորձեց վարել առաջին նախագահը: Կեղծիքներու միջոցով իրեն յաջոր- դող երկու նախագահները ամբոխա- վարութեամբ ժխտեցին անոր կեց- ուածքը եւ անպարարութեամբ ան- ցան աւելի առաջ՝ գործնապէս հրա- ժարելով մեր արդար պահանջատի- րութենէն: Թշնամիին հետ երկար, գաղտնի եւ ինքնամաշեցնող բանակ- ցութիւններով անոնք աւելի ու աւե- լի խրեցան նորանոր յաւելեալ գի- ջումներու տիրմին մէջ:

Արեւմտեան պետութիւններու միջնորդութեամբ Թուրքիոյ եւ Ատր- պէյճանի օգտին Հայաստանի անձ- նատուութեան քողարկուած գործըն- թացը իր առաջին շօշափելի «հունձ- քը» տուաւ Արձանագրութիւններու նախատորագրութեամբ: Թուրք խո- րամանկ քաղաքագէտները Սերժ Սարգսեանի արտգործնախարարի կո- կորդէն վար ճարպիկօրէն խրեցին ամբողջութեամբ իրենց ուզած բո- վանդակութեամբ պատրաստած եւ բացալայտօրէն հայերը ծուղակի մէջ ձգելու սահմանուած հայ-թուրք հա- մաձայնագրի Արձանագրութիւննե- րը: Թրքական շահերու որպէս ուղեցոյց վարպետօրէն շարադրուած այդ համաձայնագրի հիման վրայ, անոնք նախատորագրման օրն իսկ հակահայ անխնայ յարձակողականի անցան ներքին եւ արտաքին ճա- կատներով՝ առանց որեւէ ժամանակ վատնելու: Իրենց գլխաւոր թիրախ- ներն էին Յեղասպանութեան ուրա- ցումը, զայն արդէն ճանչցած երկիր- ներու կողմէ գործընթացին կասե- ցումը, պատմական Հայաստանէն մնացած վերջին նահանգները մեզմէ խլող Կարսի ապօրինի եւ անվաւեր դաշնագրի մաքսանենգութեամբ «սի- րալոյսով» վաւերացումը Հայաս- տանի մոլորեալ իշխանութիւննե-

ղարկութեան:

Դժբախտաբար, այսօրուայ վի- ճակով, Միւիթարեան վարժարանը անգամ մը եւս կը կանգնի անդունդի մը եզրին, ոչ լիովին ներկայացուց- չական ոչժ ունեցող ղեկավար մարմ- նի մը անխոհեմ քայլերուն պատճա- րով:

Սփիւռքի մեր Հայ համայնք- ները գերմարդկային ճիգեր կը թափեն պահպանելու համար Հայ ինքնութեան դիմագիծը, որու գլխա-

րուն կողմէ, Հարաբարդի անկախու- թեան դէմ ռազմաշունչ սպառնա- լիքները, եւ այլն:

Դեռ անցեալ տարի, աշխարհի մեծ պետութիւնները, մէկը միւսին ետեւէ, կը փութային ճանչնալ հայոց Յեղասպանութիւնը եւ պահանջել որ նոյնն ընէ Թուրքիան: Դեռ անցեալ տարի, Եւրամիութիւնը Թուրքիայէն կը պահանջէր որ առանց պայմանի դադրեցնէ Հայաստանի շրջափակումը եւ բանայ միակողմ- նակիօրէն իր կողմէ փակուած սահ- մանը՝ երբ Թուրքիան խուճապի մէջ ինկած էր Եւրամիութենէն ներս ընդունուելու համար: Հայաստանի համար պատմական առիթ էր գոր ի սպառ վատնեցին ներկայ ապիկար իշխանութիւնները: Հայկական կող- մը ինքը կրնար ու կը յուսամ՝ դե՛ռ կրնայ – արձանագրել դիւանագի- տական այն յաջողութիւնները զորս նուաճեցին Թուրք իշխանութիւննե- րը: Կրնար – կրնա՛յ – եթէ խելքի պայ եւ ինք որդեգրէ այն դիւանագի- տութիւնը զոր Թուրքիան հետեւո- դականօրէն կը մշակէ – մէկ կողմէ խաղաղութեան ու բարեկամութեան ձեռք մեկնել Թուրքիոյ, միւս կողմէ՝ ամբողջացնել հայոց Յեղասպանու- թեան համաշխարհային ճանաչումը, Թուրքիոյ Եւրամիութիւն մուտքին համար անոր պարտագրե՛լ Օսման- եան Թուրքիոյ կողմէ գործուած Յեղասպանութեան ճանաչումը՝ հա- մաշխարհային ճանաչման աւելի եւս հզօրացած ալիքներուն վրայ:

Որպէս գլխաւոր գոհը, կրողն ու հետեւանքը հայոց Յեղասպանու- թեան՝ սիւրուքահայութիւնը պատ- մականօրէն է՛ ու կը մնայ առաջնա- յին պահանջատէ՛րը իր ոտնակոխ- ուած իրաւունքներուն: Գաղափա- րախօսական ե՛ւ քաղաքական առա- ջին դիժերուն վրայ, սփիւռքահա- յութիւնը դրօշակիրն ու պայքա- րողն է այս անստոյգ բայց նուիրա- կան պայքարին – այնքան ատեն որ գոյատեւէ Սփիւռքը: Այս առնչու- թեամբ, գաղափարախօսութեան եւ քաղաքականութեան միջեւ սահմանա- գիծը ո՛չ յստակ է, ո՛չ անշարժ, ո՛չ ալ վերջնական: Աշխարհի ժամանակակից պատմութիւնը կը վկայէ թէ մերօրեայ պետութիւններու շատերը քաղաքա- կան իրականութիւն դարձան՝ գաղա- փարախօսական անդուլ պայքարներէ ետք որոնց վճռական հանգրուանը փոխակերպուեցաւ հիմնովին:

Ի վերջոյ, պատմութիւնն է որ ցոյց պիտի տայ թէ հայոց Յեղաս- պանութեան պայքարը գուտ պատ- մական ու գաղափարախօսական ու խնդիր է, թէ՛ կապ ունի ուշալ (իրական) քաղաքականութեան հետ: Կարեւորը կազմ ու պատրաստ ըլլան է՛ երբ պատմական առիթը ներկա- յանայ: Մինչ այդ, սակայն, անհրա- ժեշտ է աշալուրջ հսկել ու գործել, որպէսզի առիթ չտրուի որ Թուրք- իոյ նոր ծաւալապաշտներու կողմէ նիւթուող հակահայ մաքրավելակա- ն գրոհը չվերածուի՝ Հայաստանի գո- յութեան սպառնացող, պետականօ- րէն կազմակերպուած ու ֆինանսա- ւորուած անարգել ճիւղազնային:

Լոր միջոցներէն մին է Հայ Դպրոցը, ուր կը պատրաստուին եւ կը դարբն- ուին մեր ապագայ սերունդները: Հետեւաբար, Միւիթարեան վարժա- րանի այս տխուր ճակատագիրը մեծագոյն տարուածներէն մին պէտք է նկատել ուղղուած մեր ազգապահ- պանման սրբազան առաքելութեան, որու դիմաց պէտք է միանալ բոլոր ազգասէր եւ բարեացակամութիւն ունեցող անձերու եւ հաստատու- թիւններու համագործակցութիւնը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ
ՆԱԶԻԿ ԱՒԴԱԼԵԱՆԸ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆՈՒՅԻ, ԱՌԱՔԷԼ ՄԻՐՁՈՅԵԱՆԸ ԵՒ ՏԻԳՐԱՆ Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԸ ՓՈԽԱԽՈՅԵԱՆ, ՀՌԻՓՍԻՍԷ ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆԸ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ



Նագիկ Աւդալեան




Հարաւային Քորիայի Գոյան քաղաքում ընթացող ծանրամարտի աշխարհի առաջնութեան մրցաշարում Հայաստանի 69կգ քաշային ծանրորդուհի Նագիկ Աւդալեանը նուաճեց աշխարհի ախոյեանուհու կոչումը՝ ցոյց տալով 266կգ արդիւնք երկամարտում: Ի դէպ, Ն. Աւդալեանը յաղթեց նաեւ առանձին վարժութիւններում, ցոյց տալով 119կգ՝ պոկում եւ 147կգ՝ հրում վարժութիւնում, նուաճելով եւ մեծ, եւ 2 փոքր ոսկէ մետալները: Նա 2 կգ-ով շրջանցեց ռուս Օքսա-

նա Սլիվենկոյին, որը 264 կգ արդիւնքով երկամարտում նուաճեց արծաթէ մետալը եւ 18կգ-ով՝ չինացի Չաո Շաոլինին Չինաստանի Մակաոյից, որը երկամարտում ցոյց տուեց 248կգ արդիւնք: Նոյեմբերի 22-ին ասպարէզ ելան 69 կգ քաշայինները: Հայաստանի ներկայացուցիչ Առաքէլ Միրզոյեանը պոկեց 154 կգ, հրեց 180 կգ եւ երկամարտի 334 կգ արդիւնքով գրաւեց 2-րդ տեղն ու արժանացաւ արծաթէ մետալի: Նրան նաեւ պրոնզէ մետալ յանձնուեց

պոկում վարժութիւնում 3-րդը ճանաչուելու համար: Յիշեցնենք, որ նա օլիմպիական ախոյեան Օզսէն Միրզոյեանի որդին է: Իսկ ախոյեանի կոչումը նուաճեց Խուի Լիաուն (Չինաստան)՝ 346 կգ (160կգ+186կգ): Նոյեմբերի 24-ին մետալները համար պայքար մղեցին 77 կգ

Ի դէպ, չինացի ծանրորդը աշխարհի 2 ռեկորդ սահմանեց՝ պոկում վարժութիւնում եւ երկամարտում: Նոյեմբերի 28-ին մրցահարթակ ելաւ Հայաստանի 7-րդ պատուիրակը՝ Հռիփսիմէ Խուրշուդեանը (75 կգ, Քասախ): Կանանց մրցաշարում նա 3-րդը ճանաչուեց պոկում (120 կգ), հրում (147 կգ) վարժութիւններում եւ երկամարտում (267կգ): Իսկ ախոյեանի կոչումը նուաճեց Սւետլանա Պողոբեդովան (Ղազախստան)՝ 132 կգ + 160 կգ = 292



Առաքէլ Միրզոյեան



Տիգրան Գ. Մարտիրոսեան

քաշայինները: Հայաստանի ներկայացուցիչ Տիգրան Գ. Մարտիրոսեանը (Գիւմրի) առաջին անգամ իր ուժերը փորձեց աւելի բարձր քաշային կարգում եւ նրա մեկնարկը յաջող ստացուեց: Նա պոկեց 170 կգ, հրեց 200 կգ եւ երկամարտի 370 կգ արդիւնքով գրաւեց 2-րդ տեղն ու արժանացաւ արծաթէ մետալի: Նա արծաթ նուաճեց նաեւ պոկում վարժութիւնում: Ախոյեանի կոչման արժանացաւ Լիու Քսյառուշուն (Չինաստան)՝ 174 կգ + 204 կգ = 378 կգ:

կգ արդիւնքով: Նա սահմանեց նաեւ աշխարհի 4 ռեկորդ: Գոյանգի առաջնութիւնից Հայաստանի ծանրամարտի հաւաքականը իր հետ հայրենիք բերեց 12 մեդալ՝ 3 ոսկէ, 4 արծաթէ եւ 5 բրոնզէ: Թիմային պայքարում այն գրաւեց 4-րդ պատուաւոր տեղը:

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՏԻՍԱԸ» ՄՍԱՄՊՈՒԼՈՒՄ 87-64 ՀԱՇՈՒՈՎ ՅԱՂԹԵԼ Է «ՊԵՇԻԿԹԱՇ»ԻՆ

Երեւանի «Հատիսա» կանանց պասքետպոլի խումբը 87:64 հաշուով Ստամպուլում փայլուն յաղթանակ է տարել տեղի «Պէշիքթաշ»ի նկատմամբ Եւրոպայի գաւաթի 3-րդ փուլի մրցամարտում: Հայաստանի պասքետպոլիստուհիներն ամբողջ խաղի ընթացքում տիրում էին նախաձեռնութեանը եւ հաշուի մէջ առաջ էին: ՀՀ մարզուհիները ցանկաւ եկել Մորիտա Ռեյդը՝ վաստակելով 20 միաւոր, ապա Գաանա Չարիցկան՝ 17, Բոյանա Վուլիչը՝ 16, Զուլիխանա Վիանին՝ 14, Աննա Պոկոեւան՝ 9, Միլիցա Դաւուիչը՝ 9 եւ Իւա Սերգարը՝ 4 միաւոր: Այս ենթախմբի միւս խաղում Աթէնքի «Աթենաիտոսը» յաղթել է Ռուսաստանի «Չեւակատա»՝ Վոլոգդա, թիմին եւ «Հատիսա» հետ միասին 2 յաղթանակ ու 1 պարտութիւն արդիւնքով 3 խաղերում 4-ական միաւորով այժմ կիսում է 1-2-րդ տեղերը ենթախմբում: Սա Հայաստանի պասքետպոլի առաջին նման յաջողութիւնն է միջազգային մրցասպարէզում:



Armsport.am-ի թղթակցի հետ գրոյցում «Հատիսա» գլխաւոր մարզիչն իր տպաւորութիւններն է կիսել խաղից. «Ստամպուլ հասանք շատ մեծ դժուարութեամբ: 2 անգամ չուերթը յետաձգուեց: Ահաւոր յոգնած էինք: Սակայն լաւ էինք հասկանում, որ խաղի արժէքը շատ մեծ է եւ արդիւնքը կարեւոր է մեզ համար: Ուստի պէտք է ձգտէինք հնարաւորինս

յաջող խաղալ: Մեր բոլոր պասքետպոլիստուհիներն էլ հիանալի խաղացին: Առաջատարներն իրենց բարձրութեան վրայ էին: Հիանալի հանդիպում անցկացրեց նաեւ թիմի նորեկ Միլիցա Դաւուիչը: Նա միանգամից ժամանել էր Ստամբուլ: Քանի որ ուշ էինք ժամանել մրցավայր եւ չէինք մարզուել, Դաւուիչին միայն խաղից առաջ հասցրինք որոշ բաներ բացատրել: Պաշտպանութիւնում նա մեզ շատ օգնեց: Վերջապէս պաշտպանութիւնում մենք յուսալի խաղացինք, ինչը տուեց իր արդիւնքը: Յաւօք, ասաւոր մրցավարութեան հանդիպեցինք: Մրցավարներն ամէն կերպ աջակցում էին դաշտի տէրերին, բայց միեւնոյն է, դիմացանք: Մենք բոլոր առումներով գերազանցեցինք մրցակցին: Երջանիկ եմ, քանի որ գիտեմ, թէ որքան ուրախ են նաեւ Հայաստանում»:

ՎՐԻՊԱԿ

Անցեալ շաբթուան թիւով, Թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան 30-ամեակի մասին մեր տեղեկատուութեան մէջ լոյս տեսած նկարները կը պարտինք Յարութ Յակոբեանին: Ուշացումով, մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք իրեն:

Calendar of Events

Los Angeles - December 13, Sunday, St James Armenian Church 68th Name Day Anniversary Banquet 4950 W. Slauson Ave. Los Angeles, CA 90056, Priseded over by Abp. Hovnan Derderian Primate. Following church services consecration of khachkars, Incheon, cultural program & Diocesan «Hye Sprit Award» presentation at St.James «John Gogian» hall. More information call Church office 323-295-4588.

Ժամանակցոյց

13 Դեկտեմբեր, 2009 -- Կիրակի, Լոս Անճելըսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ անուանակոչութեան 68րդ տարեկան ճաշկերոյթ: Նյսձռ. հովիւին եւ Ծխական Խորհուրդին: Պատարագ եւ քարոզ, Յովնան արք. Տէրտէրեան, առաջնորդ Արեւմտեան թեմի: Տեղի պիտի ունենայ Արցախէն բերուած խաչքարերու օծում, առաջնորդարանի, Hye Sprit Award տուուչութիւն եւ գեղարուեստական յայտագիր՝ Եկեղեցւոյ «Կոկեան» սրահին մէջ: Դեռ. 323-295-4588:

Ձեր ճանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

ՄԱՐԱԶԴ



ՏՕՔԹ. ԷԼԻԶԱՊԵՏ ԳՕՂՈՍԵԱՆ «ՈՒՅԼԸՐ»
Ծնեալ 1949

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրելի տիկնոջ, մօր եւ քրոջ՝ Տօքթ. ԷԼԻԶԱՊԵՏ ԳՕՂՈՍԵԱՆ-ՈՒՅԼԸՐԻ, որ պատահեցաւ Կիրակի, 29 Նոյեմբեր, 2009ին, Փենսիլվանիա նահանգի Մարիոն քաղաքի իր բնակարանին մէջ:

Թաղման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 5 Դեկտեմբեր, 2009, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Forest Lawn Cemetery-Hollywood Hills-ի գերեզմանատան White Chapel մատրան մէջ, 6300 Forest Lawn Dr., Los Angeles, CA:

- Սգակիրներ՝ Ամուսինը՝ Տօքթ. Բանըլտ Ուէլլըր
- Զաւակները՝ Անտրու եւ Քրիսթին Ուէլլըր
- Նոյնընտանիքի՝ Տէր եւ Տիկ. Վարուժան եւ Քնարիկ Պողոսեան եւ զաւակը Յակոբ Պողոսեան
- Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարո Մարգարեան
- Անեղծակիցները եւ աներմայրը՝ Տօքթ. եւ Տիկ. Լոլլըր եւ Էլիոյ Ուէլլըր
- Եւ համայն հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ AGBU Armenia Orphan Fund, 55 E. 59th Street, New York, NY 10022-1112

Elizabeth Boghossian Weller

Elizabeth Boghossian Weller MD 60, of Merion Station Pennsylvania, passed away on Sunday, November 29, 2009 at home.

Elizabeth was a professor of child psychiatry and pediatrics at the Children's Hospital of Philadelphia and the University of Pennsylvania. She has been the president of the Society of Biological Psychiatry and the president of the American Board of Psychiatry and Neurology, as well as a member of numerous other professional organizations, and is well known as an advocate in the field of child and adolescent psychiatry. She was also active in the St. Sahag and St. Mesrob Armenian Apostolic Church in Wynnewood, PA.

Elizabeth is preceded in death by her mother Marie, and father Hagop Boghossian. She is survived by her husband of 31 years, Dr. Ronald Weller, their two children; Andrew Weller and Christine Weller, her brother Varoujan Boghossian, sister-in-law Knarig Boghossian, her niece and her husband Mr. Hagop and Mrs. Marie Markarian and nephew Hagop Boghossian, father-in-law Dr. Lowell Weller and mother-in-law Eloise Weller as well as numerous cousins and friends.

Services will take place at Forrest Lawn Cemetery - Hollywood Hills, in Los Angeles, CA at 3:00PM on Saturday December 5, 2009 in the Church of the Hills, 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068

In lieu of flowers donations can be made in her memory to:
The AGBU Armenia Orphan Fund, 55 E. 59th Street
New York, NY 10022-1112

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՍԵՒՕ ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ դառնաղէտ մահուան տխուր առիթով՝ Հ.Մ.Մ.ի Փաստօրինակի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար տէր եւ տիկ. Պողոս եւ Արփի Մարգարեաններուն:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

Ի չիշատակ իր քրոջ որդւո՞ն ՍԵՒՕ (STEVE) ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ վաղաժամ մահուան տխուր առիթով տէր եւ տիկ. Պողոս եւ Արփի Մարգարեան \$200 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթի ֆոնտին:

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆ

Տէր եւ տիկ. Փիթըր եւ Անահիտ Տարագճեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն վաղաժամեղ ՍԵՒՕ (STEVE) ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ ծնողքին տէր եւ տիկ. Սարգիս եւ Անի Պալապանեաններուն եւ ընտանեկան բոլոր հարազատներուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՍԵՒՕ (STEVE) ՊԱԼԱՊԱՆԵԱՆԻ մահուան առիթով SAHARA ճաշարանի տէրերը տէր եւ տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան եւ տէր եւ տիկ. Կարօ եւ Սեդա Գրիգորեան ցաւակցութիւն կը յայտնեն ողբացեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար ընկ. Պողոս եւ Արփի Մարգարեաններուն:

Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

ԱՅԼԱՍԵՐՄԱՆ ԵՒ ԶՈՒԼՄԱՆ ՄԱՍԻՆ

Շարունակուած էջ 13-էն

նանալու պատրաստ, հայութենէն յուսախաբ հայուհի մը, որ կը նախընտրէ օտարի մը հետ ամուսնանալ, քան թէ նիւթ ըլլալ հայ համայնքին մէջ բամբաստուելու:

Ահա այսպէ՛ս, կը կորսնցնենք թէ՛ քանակ եւ թէ՛ որակ:

Բայց վնասը այսքանով չի վերջանար, որովհետեւ անոնց հետ վերջ կը գտնեն նաեւ հայ ցեղը բազմացնող եւ զեղեցկացնող հայ մայրերը: Որովհետեւ անոնց յառաջ բերելիք սերունդները օտարազգի զաւակներ են, եթէ նոյնիսկ անոնցմէ ոմանք չիշեն, թէ իրենք հայ մօր զաւակներ են: Վերջին հաշուով հայ ազգին համար կորուստներ են անոնք՝ ակամայ ձուլման ենթարկուած զոհեր:

Կայ նաեւ ձուլման աւելի մտահոգիչ տեսակը, որուն հետեւանքով հայ վարժարաններ կը փակուին:

Այս ցաւալի երեւոյթը զանազան պատճառներ ունի, որոնց առաջինը տուեալ երկրին հայ համայնքի նօսրացումն է՝ ընթացք տալով շղթայաշատ անդրադարձներու (chain reaction) շարքի մը՝ համայնքի թիւին հետ նիւթական եկամուտի պակասելուն, եկամուտի նուազումին հետեւանքով ուսուցչական կազմի կրճատումին, որակի անկումին, եւ ի վերջոյ, ազգային դաստիարակութեան եւ գիտակցութեան նուազումին: Հայ վարժարաններու փակման պատճառներուն մէջ ամենէն մտահոգիչը այս վերջինն է: Արդարեւ, երբ չկայ ազգային դաստիարակութեան կենսական ըլլալուն մասին համոզում՝ խորունկ գիտակցութիւն՝ պատասխանատու մարդիկ եւ մարմիններ դիւրաւ տեղի կու տան յառաջ եկած նիւթական դժուարութեանց եւ փոխանակ անոնց լուծման աշխատելու, կը դիմեն վարժարան փակելու դիւրին ճամբուն: Եւ որպէսզի, հանրային դատապարտութեան ու պարսաւին չենթարկուին՝ այդ մարդիկը իրենց ազգավնաս արարքը կը փորձեն արդարացնել, պատճառաբանելով թէ տուեալ վարժարանը այլեւս չ'արդարացներ իր առաքելութիւնը: Այս մտածելակերպը արդիւնք է այլասերման: Այս մարդիկն ամենէն ակնբախ

եւ ցաւալի օրինակը հանդիսացաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան (Մ.Կ.Հ.) փակումը: Մելգոնեանը իր հիմնումէն ի վեր չէր դադրած իր առաքելութիւնը կատարելէ, իսկ վերջին շրջանին, երբ փակեցին զայն, Կիպրոսի Եւրոպական Միութեան մուտքով, իր առաքելութեան առջեւ աւելի լայն հորիզոններ բացուեցին էին: Մ.Կ.Հ. անուրանալիօրէն եղեր էր սփիւռքահայ երկրորդական վարժարաններուն լաւագոյնը՝ ազգային դաստիարակութեան դարբնոցը եւ ձուլման դէմ զլխաւոր միջնաբերդը: Եւ սակայն, ութսունամեակ մը առաջ կառուցման ժամանակաշրջանին իր գրաւած արուարձանային հողամասը այսօր դարձեր է Կիպրոսի մայրաքաղաքին ամենէն յարգի մէկ շրջանը՝ բազմահարկ միլիոնատուար արժէքով: Բայց, այլապէս ուրախաբեր թէ այս իրականութիւնը Մելգոնեանի դժբախտութիւնը եղաւ՝ պատասխանատու Միութեան ղեկավարները մղելու որ փակելով ծախել ուզեն զայն: Այս ողբալի վիճակին մէջ միւլթարական է որ կեդրոնական կառավարութիւնը ճիշդ չի նկատեր Մ.Կ.Հ. փակումը, մասնաւոր, ճամբեզրի հողամասն ալ երկու զլխաւոր շէքները համակիրաբար հարստութիւն նկատելով արգիլած է անոնց վաճառքը: Տխուր է եզրակացնել որ այլ լասերումը արդէն հասած է ձուլման դէմ թուժք կանգնելու կոչուած դասակարգին, որուն զլխաւոր ներկայացուցիչներէն ոմանք յանդգնած են յայտարարել, թէ հայ զգալու համար անհրաժեշտ չէ հայերէն խօսիլ, կամ, վարժարանի մը պարզապէս հայկական ըլլալը բաւարար չէ որ չփակուի...:

Բարեբախտաբար, Մ.Կ.Հ. փակումը համազգային հարց դարձած է եւ «Մելգոնեան Սանուց եւ բարեկամներ»ու Միութեան զլխաւորութեամբ վերաբացման համար յառաջ տարուող աշխատանքները յուսադրիչ կը թուին ըլլալ, մաղթելով որ փակողները անցած 4-5 տարիներուն ընթացքին անդրադարձած ըլլան իրենց սխալին եւ օրինական միջոցներով չփորձեն արգելք ըլլալ այս ազգօգուտ աշխատանքին արդիւնաւորման:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----

Tel :----- Fax :-----

Մեր Տարուայ Երկր Դիմաւորում Քաջ Սալարի Տես

Kach Nazar's New Year's Eve Celebration


December 31, 2009

8:00pm - 3:00am

**UNIVERSAL
HILTON HOTEL**

555 Universal Hollywood Drive
Universal City, CA 91608

Մասնակցութեամբ



ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԻՐԻԱԾ ԵՐԳԻՋՆԵՐ

ՅԱՐՈՒԹ ՓԱՍՓՈՒՔԻՇԵԱՆ - ՍԱՐՔ

ԵՐ ARIN DJ

**5 COURSE FILET MIGNON DINNER (MIDNIGHT COLD CUT BUFFET AND CHAMPAGNE)
\$150 PER PERSON KIDS 3-10 \$75.00**



For Tickets and Info Call:

Unievrsal Hilton Hotel818.506.2500
 Chaterian World Video.....818.242.6928
 Ani Grocery.....818.241.7229
 Pacific Video.....818.956.6643

Yerevan Printing.....818.246.2070
 Armen Grocery.....818.500.9005
 Shirak Grocery (La Crescenta) 818.249.3314
 Kach Nazar818.246.0125